Վայրի հավաքի արժեշղթայի գնահատման զեկույց Հայաստան

Հայաստանում գենդերային ծրագիր

Վայրի հավաքի գնահատման զեկույցը կազմվել է Համաշխարհային բանկի խմբի Հայաստանում գենդերային ծրագրի պատվերով, որն իրականացնում է Միջազգային ֆինանսական կորպորացիան (IFC)՝ Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարության և Համաշխարհային բանկի՝ գենդերային հավասարության բազմադոնոր ամպհովանի կառույցի ֆինանսավորմամբ: Զեկույցը կազմել է Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամը:

Հայաստանում գենդերային ծրագիր

Համաշխարհային բանկի խմբի Հայաստանի գենդերային ծրագրի նպատակն է աջակցել վայրի հավաքչությամբ զբաղվող կանանց՝ արտադրողականության բարձրացման, աղքատության կրճատման և տնտեսական աճի խթանման նպատակով: Հայաստանի գենդերային ծրագիրն իրականացնում է Համաշխարհային բանկի քույր կազմակերպություն և Համաշխարհային բանկի խմբի անդամ IFC-ն՝ Ավստրիայի ֆինանսների դաշնային նախարարության և Համաշխարհային բանկի՝ գենդերային հավասարության բազմադոնոր ամպհովանի կառույցի ֆինանսավորմամբ:

Այս եռամյա ծրագիրը (2017-2020թթ.) խորհրդատվություն է տրամադրում ոլորտի իրավակարգավորման դաշտի բարելավման ուղղությամբ և օգնում է կանանց զբաղվել գործունեության առավել բարձր արտադրողականություն ունեցող տեսակներով և դյուրինացնել նրանց շուկայամուտը՝ նպաստելով գնորդների և արտադրողների հետ նրանց կապի ամրապնդմանը:

Քանի որ Հայաստանի ամենաաղքատ բնակիչներից շատերը հույսը դնում են վայրի հավաքչության վրա՝ որպես իրենց եկամտի հիմնական աղբյուրի, կառավարությունը վայրի հավաքի արժեշղթան նախանշել է որպես աղքատության կրճատման կարևոր ոլորտ, հատկապես՝ երկրի բարձրլեռնային և հեռավոր շրջաններում:

Ծրագրի կողմից միջամտության համար վայրի հավաքի արժեշղթայի ընտրությունը կատարվել է դրա ներուժի գնահատման հիման վրա՝ այն նկատառումով, որ այն դառնա Հայաստանի մասշտաբով լավ զարգացած և շահութաբեր արժեշղթա, ընդ որում՝ կանանց առավել արդյունավետ մասնակցությամբ: Վայրի հավաքի արժեշղթայի բարելավումն ու զարգացումը շատ կարևոր են, քանզի՝ (i) մարզերում ամենաաղքատ մարդիկ հույսը դնում են այս արժեշղթայի, որպես եկամտի հիմնական աղբյուրի, վրա. (ii) ոլորտում գերիշխում են կանայք, որոնց համար նոր հմտություններ ձեռք բերելը կարող է օգտակար լինել՝ գործունեության ավելի բարձր հավելյալ արժեք ստեղծող տեսակների մեջ իրենց ներգրավվածությունն ավելացնելու առումով, (iii) կանանց համար հասանելիության արգելքները քիչ են (օրինակ՝ ժամանակի և շարժունության, տեխնոլոգիաների ու միջոցների հասանելիության և մշակութային խոչընդոտների առումով ավելի քիչ պահանջներ են ներկայացվում), իսկ աճի ներուժը հսկայական է:

Հայաստանում գենդերային ծրագրի նպատակն է վայրի հավաքչությամբ զբաղվող կանանց օգնել երկու եղանակով: Նախ, ծրագիրն օգնում է զարգացնել կին աշխատողների և ձեռներեցների գիտելիքներն ու հմտությունները, որպեսզի նրանք կարողանան զբաղվել ավելի բարձր արժեք ունեցող գործունեության տեսակներով և բարելավել իրենց կապերն արտադրողների ու նոր շուկաների հետ՝ օգնելով ավելի մեծ եկամուտներ ստանալ: Այս առումով նախագիծն աշխատում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) հետ՝ կանանց հավաքի ավելի լավ մեթոդներ, պահեստավորում ու փաթեթավորում սովորեցնելու, նրանց

մարկետինգային հմտությունների բարելավման հարցում օգնելու և գնորդների ու արտադրողների հետ նրանց կապերն ամրապնդելու նպատակով:

Երկրորդ, ծրագիրն աշխատում է ՀՀ կառավարության հետ՝ ոլորտի զարգացումը խթանելու համար համապատասխան ռազմավարություն մշակելու և իրավակարգավորումների առկա խոչընդոտները վերացնելու ուղղությամբ: Նպատակն է օգնել արտադրողականության և կանանց եկամուտների բարձրացման հարցում, որն իր հերթին օգնում է խթանել տնտեսական աճը և կրճատել աղքատությունը: Իրավակարգավորող բարեփոխումների արդյունավետ իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ավելի մեծ թվով կանանց ներգրավել պաշտոնական որոշումների ընդունման գործընթացում՝ մասնավոր հատված - պետություն երկխոսության միջոցով: Այդ առումով, ծրագիրը նաև նպաստում է առանցքային շահակիցների, այդ թվում կանանց բիզնես ընկերակցությունների, գնորդների, ոլորտում ստեղծված ցանցերի և կառավարության գործունեության համակարգման բարելավմանը:

2018. Միջազգային ֆինանսական կորպորացիա: Հեղինակային իրավունքները պաշտպանված են:
2121 Pennsylvania Avenue, N.W.
Washington, D.C. 20433
Internet: www.ifc.org

Սույն աշխատության նյութը պաշտպանված է հեղինակային իրավունքով: Առանց համապատասխան թույլտվության աշխատության մասերի կամ ամբողջ աշխատության պատճենումը և (կամ) փոխանցումը կարող է դիտարկվել որպես համապատասխան կիրարկելի օրենքի խախտում: IFC-ն չի երաշխավորում սույն աշխատության բովանդակության ճշգրտությունը, հուսալիությունը և ամբողջականությունը կամ այստեղ առկա եզրակացություններն ու դատողությունները և որևիցե պատասխանատվություն կամ պարտավորություն չի կրում նյութի բովանդակության մեջ եղած բացթողումների կամ սխալների (ներառյալ, առանց սահմանափակումների, տպագրական և տեխնիկական սխալները) կամ դրանց վրա հիմնվելու համար:

Բովանդակություն

Բառացանկ 6

1. Ներածություն 8

1.1 Նախագծի նպատակը 8

1.2 Կանանց զբաղվածությունը Հայաստանում 9

1.3 Վայրի հավաք. Վերջին համաշխարհային միտումները 11

1.4 Զարգացումները հայաստանյան վայրի մթերքների առևտրի ոլորտում և դրանց հնարավոր շուկաները 13

2. Ուսումնասիրության մեթոդաբանությունը 16

2.1 Փուլ 1: Անհատների և խմբերի՝ վայրի հավաքի հմտությունների գնահատում, ինչպես նաև վայրի հավաքի՝ օգտագործվող գործելակերպերի ու մեթոդների բացահայտում 16

2.2 Փուլ 2. Վայրի բուսանյութերի հավաքորդների հմտություններում առկա բացերի բացահայտումը 17

2.3 Փուլ 3. Վավերացման աշխատաժողով 17

2.4 Փուլ 4. Վերապատրաստման ձեռնարկների կազմում և ուսուցանողների վերապատրաստում 18

3. Ընդհանուր գործարար միջավայրը և վայրի հավաքի իրավակարգավորումները 19

3.1 Օրգանական չափորոշիչ վայրի հավաքահ համար 19

3.1.1 ՖեըրՎայլդի չափորոշիչը և վայրի հավաքի միջազգայնորեն ընդունված իրավակարգավորումները 21

3.1.2 Վայրի հավաքի բնապահպանական իրավակարգավորումները ՀՀ-ում 24

4. Գնահատման արդյունքները 29

4.1 Հավաքվող հիմնական մթերքները 29

4.1.1 Հատապտուղներ 32

4.1.2 Խոտաբույսեր 33

4.2 Հարցվողների ուղղվածությունը 35

4.3 Գնումների աղբյուրները և համագործակցությունը արժեշղթայում 37

4.4 Վայրի բույսերի հետբերքահավաքային մշակում 40

4.5 Հմտություններ, տեղեկատվության հասանելիություն և ֆինանսների մատչելիություն 42
4.6 Հավելյալ արժեքներ, յուրաքանչյուր շահակցի ստացած գնանցքը ընտրված արժեշղթայում 48
4.6.1 Վայրի հատապտուղներ 48
4.6.2 Վայրի խոտաբույսեր 52
4.6.3 Բիզնես հնարավորությունների կին ձեռներեցներիհամար 55
5. Հավաքված արտադրանքը և հնարավոր ընդլայնումը վայրի խոտաբույսերի և հատապտուղների օրինակով 58
5.1 Հավաքվող հիմնական խոտաբույսերն ու հատապտուղները և վայրի մթերքի առկա և հեռանկարային շուկաները 58
6. Եզրակացություններ և առաջարկություններ 62
Օգտագործված գրականություն 68
Հավելված 1. Վայրի հավաքորդի հարցաշար 70
Հավելված 2. Սննդի վերամշակման ընկերությունների հարցաշար 73
Հավելված 3. Վավերացման աշխատաժողովի օրակարգը 78

Բառացանկ

ADB ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
AMD	Դրամ (ամերիկյան 1 դոլար = 485 դր.)
ԵՄ	Եվրոպական Միություն
ՊԳԿ	Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
GIZ	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (*Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit*)
GSP	Սակագնային նախընտրությունների միացյալ համակարգ
ICARE	Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն
IFC	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ISSC MAP	Դեղաբույսերի և անուշաբույր բույսերի հարակայուն վայրի հավաքի միջազգային չափորոշիչ
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ՀԿ	Հասարակական (ոչ կառավարական) կազմակերպություն
ՕԳԱՆ	Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
UNFPA ՄԱԲՀ	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
ԿԲԸ	Կանանց բիզնես ընկերակցություն

1. Ներածություն

Հայաստանի վայրի հավաքի ոլորտի վերաբերյալ լիարժեք տվյալներ չկան, բայց վերջին տարիներին օրգանական գյուղատնտեսության զարգացման խթանումը անառարկելիորեն հանգեցրել է հավաքի ծավալների ավելացմանը: Հավաքվող բույսերը գլխավորապես խոտաբույսերն են, հատապտուղները և վայրի մրգերը: Հաշվի առնելով հավաքի առանձնահատկությունները, այս գործում գլխավորապես ներգրավված են գյուղական վայրերում բնակվող կանայք, որոնց համար այս զբաղմունքը կարող է լինել կայուն եկամտի հիմնական աղբյուրը:

Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) կողմից իրականացվող Հայաստանում գենդերային ծրագրի նպատակն է բարելավել գյուղական վայրերի կանանց ձեռնարկչական հմտությունները՝ արժեշղթայում նրանց մասնակցության ավելացման և Կանանց բիզնես ընկերակցության (ԿԲԸ) շրջանակում համագործակցության զարգացման միջոցով: Ծրագիրն ունի նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը (ԳՆ) քաղաքականություն մշակելու հարցում աջակցության բաղադրիչ, որը նպատակաուղղված է վայրի հավաքի իրավակարգավորող դաշտի բարելավմանը, որն իր հերթին կնպաստի այդ իրավակարգավորումների առումով պաշտոնական որոշումների ընդունման հարցում ավելի մեծ թվով կանանց ներգրավմանը:

1.1 Նախագծի նպատակը

ԳՆ-ն վայրի հավաքը սահմանել է որպես, հատկապես սոցիալապես ու տնտեսապես թույլ զարգացած լեռնային և սահմանամերձ շրջաններում, աղքատության կրճատման և սոցիալապես ու բնապահպանական տեսակետից հարակայուն զարգացման նպատակներով առաջնորդվող կարևոր ոլորտ, որը կարող է կառավարությանն աջակցել վայրի հավաքի ոլորտի ռազմավարություն մշակելու հարցում՝ արժեշղթայում կանանց ավելի ակտիվ մասնակցության առանցքային խնդիրներն ու խոչընդոտները հասկանալու նկատառումով իրականացնելով արժեշղթայի խորազնին տեխնիկական վերլուծություն:

Ինչպես սահմանված է Հայաստանում գենդերային ծրագրի ուսումնասիրություններում, վայրի հավաքի արժեշղթան ընտրվել է միջամտության համար, քանի որ մարզերում ամենաաղքատ բնակչությունը կարող է ներգրավվել այդ ոլորտում որպես իր համար եկամտի հիմնական աղբյուր: Բացի այդ, սեզոնային միգրացիայի բարձր ցուցանիշներ ունեցող մարզերում կանայք դառնում են տնային

տնտեսությունների ղեկավարներ և հաճախ պատասխանատու են ապրուստի միջոցներ հայթայթելու համար: Այս ոլորտում ներգրավվածությունը նաև գործնականում չունի հասանելության արգելքներ և չի պահանջում նախնական ներդրում:

Վայրի հավաքի ոլորտի գնահատումն իրականացվել է երկրի մի քանի մարզերում, այդ թվում՝ Լոռիում, Տավուշում, Կոտայքում և Արագածոտնում, այն վայրերում, որտեղ օդը մաքուր է, իսկ լեռների առկայությունն ու արևի լույսի առատությունը ստեղծում են վայրի մթերքի համար նպաստավոր միջավայր: Սակայն, պետության գերակայություններից և ծրագրի նպատակներից[1] ելնելով, հետագա զարգացման համար առաջարկված մարզերը (Լոռի և Տավուշ) սահմանափակվեցին սահմանամերձ շրջաններով, ընդ որում ընտրությունը կատարվել է աղքատության առավել բարձր ցուցանիշ ունեցող բնակավայրերի շրջանում:[2]

1.2 Կանանց զբաղվածությունը Հայաստանում

Հայաստանում տղամարդկանց և կանանց զբաղվածության ցուցանիշները էականորեն տարբերվում են: Ըստ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) «Տղամարդիկ և գենդերային հավասարությունը Հայաստանում» ուսումնասիրության[3] շրջանակում իրականացված 767 տղամարդկանց և 850 կանանց հետազոտության, կանանց մոտ 42 տոկոսը գործազուրկ է, որը մոտ 10 տոկոսով գերազանցում է տղամարդկանց գործազրկության ցուցանիշը:

Աղյուսակ 1-ում ներկայացված են տղամարդկանց և կանանց զբաղվածության՝ հետազոտության շրջանակում պարզված ամփոփ տվյալները:

Աղյուսակ 1. Մեռային հիմունքներով զբաղվածության վիճակագրությունը Հայաստանում

[1] Armenia Poverty Profile in 2008–2016 reported by National Statistical Services, http://www.armstat.am/file/article/poverty_2017_english_2.pdf.

[2] Հայաստանում գենդերային ծրագիր. Women Business Association-led PPD in Armenia by Gayane Mkrtchyan, http://www.publicprivatedialogue.org/workshop%202017/2017%20-%20Public%20Private%20Dialogue%20in%20Armenia.pdf

[3] ՄԱԲՀ «Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրը Հայաստանում – Երևան, 2016» http://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN-AND-GENDER-EQUALITY_ARM_July_2017_finalized_0.pdf

Զբաղվածության կարգավիճակը	Տղամարդիկ N = 767, 100%		Կանայք N = 850, 100%	
Երբեք չի աշխատել	40	5.2%	171	20.1%
Ուսանող	24	3.1%	48	5.6%
Գործազուրկ	249	32.5%	356	41.9%
Գրանցված աշխատող	224	29.2%	185	21.8%
Չգրանցված աշխատող	227	29.6%	68	8.0%
Սովորում և աշխատում է	2	0.3%	1	0.1%
Երեխայի խնամքի կամ այլ արձակուրդում	1	0.1%	19	2.2%
Պատասխան չկա	0	0.0%	2	0.2%

Աղբյուրը ՝ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (ՄԱԲՀ) 2016:

Մեկ այլ ուսումնասիրություն, որն իրականացրել է Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ, ADB) 2015թ.-ին, ցույց է տալիս, որ թեպետ միջին հաշվարկով Հայաստանում կանայք ավելի բարձր մակարդակի կրթություն ունեն, սակայն աշխատուժի մեջ նրանց մասնակցության մակարդակն ավելի ցածր է: Ընդ որում գրանցված աշխատողների թվում կանայք գլխավորապես ներկայացված են պետական հատվածի աշխատատեղերում, ավելի կոնկրետ՝ կրթության և առողջապահության ոլորտներում: Ղեկավար պաշտոններ զբաղեցնողների մոտ 69 տոկոսը տղամարդիկ են:[4]

Բոլոր պայմանագրային աշխատողների միայն 26.8 տոկոսն են կանայք: Պայմանագրային գործունեությամբ զբաղվող կանայք ներգրավված են սեզոնային աշխատանքներում և տարվա մեջ միայն չորս ամիս են զբաղված:[5]

Իրավիճակը փոքր-ինչ այլ է, երբ խոսքը վերաբերում է գյուղատնտեսությանը և փոքր գյուղացիական տնտեսություններին. 0-2 հա հող ունեցող գյուղական տնային տնտեսությունների մոտ 58 տոկոսը ղեկավարում են կին ֆերմերները: Սա գլխավորապես պայմանավորված է գյուղական վայրերում տղամարդկանց սեզոնային միգրացիայով, երբ լքելով կանանց, երեխաներին և տարեցներին, մեկնում են արտագնա աշխատանքի: Սա ցույց է տալիս գյուղական վայրերում կանանց համար այլընտրանքային եկամտի կարևորությունը, ինչպիսին է, օրինակ, վայրի հավաքը:

[4] Ասիական զարգացման բանկ. 2015. *Հայաստանի գենդերային իրավիճակի գնահատում:* https://www.adb.org/sites/default/files/institutional-document/178897/arm-country-gender-assessment-hy.pdf

[5] Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամ – Գյուղատնտեսական համատարած հաշվառման տեղեկատվական թերթիկներ /Կանայք գյուղատնտեսությունում, https://icare.am/wp-content/uploads/2017/12/arm-agriculture-FactSheets1.pdf).

1.3 Վայրի հավաք. վերջին համաշխարհային միտումները

Վայրի բույսերն ու դրանց հավաքման վայրերը՝ ըստ տարածաշրջանների, ներկայացված են IFOAM Օրգանիքս Ինթերնեշնլի կողմից հրապարակված զեկույցում, որն իրականացվել է Առևտրի միջազգային կենտրոնի (Միավորված ազգերի կազմակերպության առևտրի և զարգացման համաժողով/Առևտրի համաշխարհային կազմակերպություն՝ UNCTAD/WTO) պատվերով:[6]

Եվրոպայում վայրի հավաքի ամենաընդարձակ տարածքները գրանցվել են Ֆինլանդիայում և Ռումինիայում, որոնց հետևում են Բուլղարիան, Իսլանդիան և Ալբանիան: Գրանցվել է շուրջ 200 տարբեր բուսատեսակների հավաք, սակայն այս տարածաշրջանի հիմնական կատեգորիաներն են եղել վայրի հատապտուղները և սնկերը:

Աֆրիկայում քանակական տեսակետից որպես ամենակարևոր բուսատեսակներ գրանցվել են շի ծառի կարագ, մասուրը, արաբական խեժը, արգանի յուղը և ցիկլոպիան (մեղրափուշը): Աֆրիկայում վայրի հավաքի ամենաընդարձակ տարածքները գրանցվել են Քենիայում և Զամբիայում:

Հյուսիսային Ամերիկայում հավաքվող ամենակարևոր մթերքներն են վայրի բրինձը, թխկու օշարակը, վայրի հապալասը և կապտականաչ ջրիմուռը: Հավաքի հիմնական տեղամասերը գտնվում են Կանադայում:

Հարավամերիկյան տարածաշրջանը հիմնականում արտահանում է բրազիլական ընկույզ, կոկոս, արմավենու միջուկ և մասուր: Հավաքի տարածքի առումով Բոլիվիան առաջատար երկիրն է, որին հետևում են Բրազիլիան, Պերուն և Գվատեմալան:

Ասիայում Չինաստանը առաջատարն է վայրի հավաքի արձանագրված տարածքների առումով: Ասիայում առկա է հավաքվող մթերքների ամենամեծ բազմազանությունը (մոտավորապես 241 տեսակ): Այնպիսի մթերքներ, ինչպիսիք են բամբուկի ընձյուղները, ընկույզը, թեյի սերմերը, ծովային ջրիմուռները, հատապտուղները և սունկը, հավաքվում են մեծ քանակություններով:

Ավստրալիայում և Օվկիանիայում օրգանական վայրի հավաքը առևտրային տեսակետից շատ քիչ կարևորություն ունի: Հավաքվող մթերքների ցանկում են վայրի

[6] http://www.organicservices.com/fileadmin/files/05publications/Studies/World_Production_and_Marketing_of_Organic_Wild_Collected_Products_final.pdf.

կենդանիների միսը, նոնին (ցիտրուսատերև մորինդա), ծովային ջրիմուռը, կենգուրուախոտը (ավստրալական տեմեդա) և մեղրը:

Թեպետ վայրի հավաքի ենթարկվող բազմաթիվ տարբեր մթերքներ պահանջարկ են վայելում համաշխարհային շուկայում, սակայն Հայաստանը սահմանափակ հնարավորություններ ունի դրանք աշխարհին մատակարարելու հարցում: Հայաստանում հավաքվող հիմնական բուսատեսակներն են խոտաբույսերն ու վայրի հատապտուղները: Իրենց հերթին, խոտաբույսերը կարելի է օգտագործել որպես բուսական թեյ, դեղաբույս և յուղատու բույս կոսմետիկայի արդյունաբերության համար:

Եվրոպական Միության (ԵՄ) խոտաբույսերի և եթերային յուղերի շուկան շարունակում է մնալ աշխարհում ամենամեծը: Եվրոպայում աճում է թարմ խոտաբույսերի պահանջարկը՝ պայմանավորված այն փաստով, որ առողջ ապրելակերպը, հարմարավետությունը և նոր համերի հանդեպ հետաքրքրությունը գնալով ավելի արդիական են դառնում:[7] Բացի այդ, եվրոպական երկրներում հասարակությունների հարաճուն բազմամշակութայնությունը և եվրոպացիների՝ դեպի տարաշխարհիկ տարածաշրջաններ ավելի շատ ճանապարհորդելու սովորույթը ի վերջո հետաքրքրություն են առաջացնում տարաշխարհիկ խոհանոցներում օգտագործվող համեմունքների ու խոտաբույսերի նկատմամբ:

Թարմ խոտաբույսերը, մասնավորապես ռեհանը, դաղձը և սոխ կտրողը (սեզատերև), շարունակում են մնալ այս կատեգորիայի ամենասպառվող մթերքները: Շատ տարածված է նաև խոտաբույսերի օգտագործումը կոսմետիկայի և բժշկական նպատակներով: ԵՄ շուկայում նկատվում են եթերային յուղերի ներմուծման ծավալների աճի միտումներ:

Այս ուսումնասիրության տեսակետից, Գծապատկեր 1–ում ներկայացված առևտրային տվյալները բովանդակում են սահմանափակումներ այն առումով, թե արդյոք վաճառքի հանված մթերքը վայրի է, թե մշակովի: Ցավոք, այս սահմանափակումը ամրապնդված չէ համապատասխան առևտրային ցուցանիշներով: Սակայն, քանի որ Հայաստանում վայրի հավաքից ստացված բույսերը գլխավորապես դառնում են բուսական թեյեր, համեմունքներ և եթերայուղ, ուստի հենց այս կատեգորիաների արտահանման շուկան էլ կդիտարկենք:

[7] CBI - Dutch Ministry of Foreign Affairs, "Which Trends Offer Opportunities on the European Spices and Herbs Market?" https://www.cbi.eu/market-information/spices-herbs/trends/.

Գծապատկեր 1. ԵՄ ներմուծվող կանաչ թեյի, համեմունքների և եթերայուղերի արժեքը 2013–2017թթ.-ին (մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ սեփական հաշվարկներ, ՄԱԿ-ի ապրանքների առևտրի վիճակագրական տվյալների բազա:

1.4 Զարգացումները հայաստանյան վայրի մթերքների առևտրի ոլորտում և դրանց հնարավոր շուկաները

Վայրի մթերքների հնարավոր շուկաները քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել արտահանման ծավալները: Նախկինում փորձարկվել են ռուսական և ԵՄ շուկաները: Օտարերկրյա առևտրականները պահանջում են վայրի մթերքի մեծ քանակություններ, սակայն գործառնական սահմանափակ կարողությունները հայաստանցի արտադրողներին արտադրությունն ընդլայնելու և վայրի մթերքի աճող պահանջարկին արձագանքելու հնարավորություն չեն թողել: Դա է պատճառը, որ ներկայումս միայն փոքր քանակություններ են թիրախավորվում որոշակի շուկայահատվածների համար, ընդ որում պարզվում է, որ ռուսական շուկան այնքան շահութաբեր չէ, որքան ակնկալում էին արտադրողները:

Հայաստանյան վայրի մթերքի առևտրային տվյալների վերլուծության ժամանակ բացահայտվեց, որ եթերայուղերի և համեմունքների արտահանումները կազմում են 30,000 ԱՄՆ դոլարից էլ պակաս (ընդ որում հիմնական շուկան Ռուսաստանն է): Չնայած այն հանգամանքին, որ կանաչ (բուսական) թեյը որպես կատեգորիա ավելի հայտնի է և արտահանվում է, եթերայուղերի և համեմունքների արտահանման մասին

նույնպես կարելի է մտածել: Վայրի հավաքի այս կատեգորիաների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ են տրված Գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2. Հայաստանից կանաչ թեյերի, համեմունքների և եթերայուղերի արտահանման արժեքը 2013–2017թթ.-ին (ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ սեփական հաշվարկներ, ՄԱԿ-ի ապրանքների առևտրի վիճակագրական տվյալների բազա:

Թեպետ բուսական թեյը որպես կատեգորիա կազմում է այս կատեգորաիների մեջ ամենամեծ մասը, Հայաստանից բուսական թեյի արտահանման ընդհանուր ծավալն այնքան էլ մեծ չէ: Ընդ որում, Հայաստանից արտահանվող բոլոր խոտաբույսերի 88 տոկոսը գնում է Ռուսաստանի Դաշնություն (ՄԱԿ-ի ԱԱՎ տվյալների բազա):

Մեկ տարուց մյուս տարի տատանումները կարելի է բացատրել այն հանգամանքով, որ վայրի խոտաբույսերի առկայությունը կախված է նպաստավոր եղանակային պայմաններից: Համենայնդեպս, խոտաբույսերի արտահանումը կարող է բավականին խոստումնալից լինել, հատկապես՝ արտահանման շուկաներում դրա բարձր պահանջարկի լույսի ներքո: Առևտրային տվյալների գնահատումը ՄԱԿ-ի ԱԱՎ տվյալների բազայում և, մասնավորապես, ԵՄ շուկա կանաչ թեյի ներմուծման վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՄ-ն կարելի է դիտարկել որպես հայաստանյան բուսական թեյեր արտահանողների համար պոտենցիալ մեծ շուկա, պայմանով, որ հայաստանցի արտադրողները բավարարեն ԵՄ շուկայի սննդի անվտանգության պահանջները: Բուսական թեյերի՝ աշխարհում ամենամեծ ներմուծողը Մարոկոն է, որը 2016թ. ներմուծել է մոտ 66 մլն կգ կանաչ թեյ: Հատկանշական է, որ եթե Մարոկոն

ներմուծված կանաչ թեյի 1 կգ-ի համար վճարում է մոտ 3 դոլար, ապա, իրականացնելով հավելյալ արժեք առաջացնող որոշակի գործողություններ, նույն ապրանքատեսակն արտահանում է կգ-ը մոտ 22 դոլարով: Կանաչ թեյի ամենամեծ ծավալները ներմուծող երկրների վերաբերյալ մանրամասն տվյալները ներկայացված են Գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3. Բուսական թեյերի ամենամեծ ներմուծողները 2016թ.-ին (մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը՝ սեփական հաշվարկներ, ՄԱԿ-ի ապրանքների առևտրի վիճակագրական տվյալների բազա:

Գծապատկերը ներկայացնում է այն երկրները, որոնք դիտարկվել են որպես հայկական բուսական թեյերի պոտենցիալ շուկա: Այդ շուկաներում մրցունակ լինելու համար հայաստանցի արտադրողների համար կարևոր է հետազոտել համապատասխան երկրների կողմից ներկայացվող պահանջները և ներմուծման կանոնակարգերը:

Ընդհանուր առմամբ, վայրի ձևով հավաքվող բազմաթիվ բույսեր շուկայահանվում են որպես օրգանական: Այս փաստը ցույց է տալիս հավաքորդների համար ավելի բարձր շահութաբերություն ապահովելու ներուժը, որովհետև օրգանական արտադրանքը շուկայում բարձր արժեք ունի: Սակայն էլ ավելի բարձր շահույթներ կարելի է ստանալ, եթե հայաստանցի հավաքողներն ընդլայնեն իրենց աշխատանքի ընդգրկումը՝ ձեռնարկելով նաև հավելյալ արժեք ստեղծող աշխատանքներ, ինչպես օրինակ՝ մաքրելը, տեսակավորումը և փաթեթավորումը:

2. Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Նախնական տեղեկությունները փաստել են, որ, կախված կոնկրետ վայրի բույսից՝ արժեշղթաները կարող են տարբերվել: Սակայն կան շղթաներ, որոնք գրեթե կրկնօրինակում են միմյանց: Սա ի նկատի ունենալով, խնդրո առարկա վայրի մթերքները բաժանվել են երկու մեծ կատեգորիաների՝ խոտաբույսեր (թե՛ դեղաբույսեր և թե՛ բուսական թեյեր) և մրգեր ու հատապտուղներ:

Այս ուսումնասիրության համար հավաքված տվյալները պարունակում են և՛ ուղղակիորեն ոլորտի շահակիցներից հավաքված տեղեկություններ (ընդամենը 39 հարցվող է մասնակցել տվյալների հավաքմանը), և՛ երկրորդային աղբյուրներից հավաքված տեղեկություններ (այն է՝ կոնկրետ կազմակերպությունների կայքերից վերցված և առկա տվյալների բազաներից քաղված, ինչպես օրինակ՝ ՀՀ ԱՎԾ-ից կամ ՄԱԿ-ի ԱԱՎ տվյալների բազայից): Առաջադրանքը կազմված է հետևյալ փուլերից.

2.1 Փուլ 1. Անհատների և խմբերի՝ վայրի հավաքի հմտությունների գնահատում, ինչպես նաև վայրի հավաքի՝ օգտագործվող գործելակերպերի ու մեթոդների բացահայտում

Տվյալների հավաքման առաջին փուլի համար որպես հիմնական գործիք ընտրվել են կիսակառուցվածքավորված հարցազրույցները և ֆոկուս խմբերով քննարկումները: Հարցվողին ոչ պաշտոնական քննարկման մեջ ներգրավելու համար հարցազրույցի ընթացքում զրուցավարը հետևում է յուրահատուկ ուրվագիծ-հարցաշարի (Հավելված 1 և Հավելված 2): Ուրվագծերը կազմվել են Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) կողմից առաջարկվող Հավաքվող բուսանյութերի բերքահավաքի լավագույն գործելակերպի[8] հիման վրա: Արժեշղթայի համակողմանի դիտարկում կատարելու համար գնահատումն իրականացվել է ամբողջ արժեշղթայի մասնակիցների մակարդակով, ներառյալ՝

- Ֆերմերներ/հավաքորդներ (այդ թվում կանանց ոչ ֆորմալ խմբեր),
- Փոխադրողներ/միջնորդներ,
- Վերամշակողներ,
- Սպառողներ (մանրածախ ոլորտի միջոցով):

[8] “Guideline on the Commercial Collection of Plant Material from the Environment for Medicinal Purposes.” G.Harnischfeger, ICMAP News, No. 7, June 12–14, 2000, http://www.fao.org/docrep/005/y4496e/y4496e35.htm.

Սպառողների հետազոտություն չի իրականացվել, բայց սպառողների նախընտրությունները և սպառողի մակարդակում վճարվող գները բացահայտվել են մանրածախ ոլորտի հարցումների միջոցով:

2.2 Փուլ 2. Վայրի բուսանյութերի հավաքորդների հմտություններում առկա բացերի բացահայտումը

Առաջադրանքի այս փուլը ներառում է հարցազրույցներ վերամշակողների, պետական պաշտոնյաների և այն կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են վայրի հավաքի ոլորտի համար չափորոշիչների սահմանմամբ կամ մտահոգ են բերքահավաքի գործելակերպերի հարակայունությամբ: Կատարվել է նաև տեղեկատվության երկրորդային աղբյուրների, այդ թվում՝ հարակայուն վայրի հավաքի չափորաշիչների և գյուղատնտեսական լավագույն գործելակերպերի զննություն:

Ուսումնասիրվել են միջազգային տարբեր կազմակերպությունների, ինչպիսիք են Պարենի համաշխարհային ծրագիրը կամ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (*Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit*, GIZ), մշակած չափորոշիչները: Վայրի հավաքի և հետբերքահավաքային մշակման վերաբերյալ ՊԳԿ-ի Գյուղատնտեսական լավագույն գործելակերպերը նույնպես օգտագործվել են հմտությունների գնահատման համար համապատասխան հենանիշներ սահմանելու նպատակով:

Մյուս կողմից, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպությունից (ՊՈԱԿ) ձեռք են բերվել վայրի հավաքչությանն առնչվող տեղական կանոնակարգեր՝ նպատակ ունենալով ապահովել վայրի հավաքի գործելակերպերի համապատասխանեցումը պետության կողմից սահմանվածներին:

Գնահատված բոլոր կանոնակարգերն ու չափորոշիչներն այնուհետև համեմատվել են բերքահավաքի ընդունված գործելակերպերի վերաբերյալ նախնական տվյալների հետ՝ հավաքորդների հմտություններում առկա այն բացերը հասկանալու համար, որոնք պետք է հաշվի առնել ուսուցողական ձեռնարկը պատրաստելիս:

2.3 Փուլ 3. Վավերացման աշխատաժողով

Հետազոտական թիմի կողմից հարցազրույցների և նախնական ուսումնասիրության հաջող ավարտից հետո ICARE հիմնադրամում կազմակերպվեց վավերացման աշխատաժողով: Աշխատաժողովը նպատակ էր հետապնդում հետազոտության

նախնական արդյունքները ներկայացնել ոլորտի ներկայացուցիչներին և խմբային քննարկումների մեջ ներգրավել շահակիցների լայն ընտրանու՝ գնահատման փուլի արդյունքները քննության առնելու և հաջորդ քայլերի համար առաջակություններ ստանալու նպատակով:

Միջոցառմանը մասնակցեցին ՀԿ-ների, զարգացման կազմակերպությունների, համալսարանների, վերամշակող ընկերությունների և ԳՆ ներկայացուցիչներ: Վավերացման աշխատաժողովը կարևոր քայլ էր ուսումնասիրության արդյունքների հստակեցման և քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների բարելավման տեսակետից:

2.4 Փուլ 4. Ուսուցողական ձեռնարկների կազմում և ուսուցանողների վերապատրաստում

Վայրի հավաքի ձեռնարկի մշակումն առաջադրանքի վերջին փուլն է: Այդ ձեռնարկի նպատակն է լրացնել հավաքորդների հմտություններում առկա բացը, և այն կազմված է հավաքորդների կարիքների և արժեշղթայի այլ պահանջների հիման վրա: Ձեռնարկի նախապատրաստման ընթացքում հավաքի ու հետբերքահավաքային մշակման փաստացի գործելակերպերը համադրվել են չափորոշիչներով պահանջվող գործելակերպերի հետ (չմոռանալով հարակայունության սկզբունքները) և վեր են հանվել բարելավման կարիք ունեցող ոլորտները:

Ձեռնարկում տեղ են գտել նաև շուկայի մատչելիության և ֆինանսների հասանելիության տեսակետից հավաքորդների կարիքները: Ձեռնարկն առանձին փաստաթուղթ է, որը կծառայի որպես ուսուցանողներին վերապատրաստելու հիմնական ուղեցույց:

3. Ընդհանուր գործարար միջավայրը և վայրի հավաքի իրավակարգավորումները

3.1 Օրգանական չափորոշիչ վայրի հավաքի համար

Վայրի հավաքի հիմնական մասը կատարվում է՝ հետագա վերամշակմամբ օրգանական մթերք ստանալու համար: Հայաստանում գործում է հավաստագրման մեկ կազմակերպություն (Էկոգլոբը), որն օգտագործում է Կանաչ Կովկաս մասնավոր չափորոշիչը, որն էլ գնահատվում է որպես ԵՄ օրենսդրությանը համարժեք և ճանաչված է Օրգանական գյուղատնտեսության շվեյցարական օրինակարգի ու ՀՀ ԳՆ-ի կողմից:

Կանաչ Կովկաս չափորոշիչը (Գրին Կովկաս ստանդարտ) վայրի հավաքի համար[9]

Անտառներում, բնական տարածքներում և գյուղատնտեսական հողերում բնական ձևով աճող բույսերի և դրանց մասերի բերքահավաքը կարող է համարվել օրգանական արտադրության մեթոդ այն դեպքերում, եթե՝

- Մթերքը հավաքվել է նախապես որոշված հավաքի տարածքից, որը ենթակա է հավաստագրման/տեսչական ստուգման՝ Չափորոշիչների Բաժին 6-ում նկարագրված միջոցառումներին:
- Տարածքները բույսերի հավաքին նախորդող երեք տարիների ընթացքում որևիցե բուժում չեն ստացել Հավելված 2-ում թվարկված նյութերից տարբերվող այլ նյութերով:
- Հավաքը որևիցե վտանգ չի պարունակում բնական միջավայրի կայունության և բույսերի պահպանության նկատմամբ այն տարածքում, որտեղ տեղի է ունենում հավաքը:

Գերհավաքից խուսափելու և էկոհամակարգի կայունությունն ապահովելու համար բույսերի մասերը պետք է հավաքել ստորև բերված տոկոսային հարաբերություններով.

- Արմատներ, սոխարմատներ - պոպուլյացիայի 20 տոկոսը

[9] Օրգանական հավաստագրման մարմին Էկոգլոբ ՍՊԸ-ի կողմից սահմանված Կանաչ Կովկաս չափորոշիչը http://ecoglobe.com/wp-content/uploads/2013/12/10.3-Green-Caucasus-Standard_arm_130614.pdf

- Տերևներ (թփեր, ծառեր) - տերևների 30 տոկոսը
- Ծաղիկներ - 70 տոկոսը
- Սերմեր/պտուղներ. 80/70 տոկոսը – այս դեպքում բերքահավաքը կամ հավաքը կատարում է հավաքի տարածքին քաջածանոթ փորձառու տնտեսավարողը

Վայրի բուսատեսակների բերքահավաքի թույլտվությունը պետք է ձեռք բերել տեղական իշխանություններից և ներկայացնել հավաստագրման մարմնին, ընդ որում պատասխանատու կազմակերպությունը/մարմինը պետք է հստակ կերպով սահմանի հավաքի կանոնները հավաքի ենթակա բուսատեսակների բոլոր կատեգորիաների համար: Օրգանական վայրի հավաքը պետք է իրականացնել մաքուր, չաղտոտված տարածքներում: Բացի այդ, հավաքը պետք է պատշաճ կերպով փաստաթղթավորվի՝ ապահովելով ապրանքի ծագման հետագծելիությունը:

- Կարմիր գրքում գրանցված կամ այլ կերպ վերացման վտանգի տակ գտնվող տեսակները չի կարելի հավաքել:
- Բույսերին հասցվող վնասները պետք է նվազագույնի հասցնել:
- Հավաքը չպետք է ոչնչացնի կամ որևիցե վնաս հասցնի բնական միջավայրին կամ այլ օրգանիզմների կերին:
- Հավաքորդները չպետք է իրենց ետևից աղբ թողնեն, պատճառեն անտառային հրդեհներ, զբաղվեն ապօրինի որսով և այլն:
- Հավաքը չի կարելի իրականացնել մեծ քաղաքների, միջուկային շինությունների, արդյունաբերական կենտրոնների և ճանապարհների մերձակայքում:
- Հավաքորդներին պետք է պատշաճ կերպով ուսուցանեն հավաքի մեթոդների, հավաքի առավելագույն թույլատրելի քանակների, հավաքի համապատասխան վայրերի և բնապահպանական վնասների թեմաներով: Այս նպատակով խորհուրդ է տրվում հավաքն իրականացնել կազմակերպված խմբերով:
- Պատասխանատու կազմակերպությունը կամ անձը պետք է ներկայացնի օրգանական կառավարման պլան:

- Պետք է ներկայացնել հավաքի տարածքի մանրակրկիտ քարտեզ (նախընտրելի է՝ 1:50,000 մասշտաբով, բայց ոչ ավելի փոքր քան 1:250,000), որտեղ նշված լինեն հավաքի տեղերը, կրիտիկական տարածքները և մեծածախ առևտրի կետերը:

- Բոլոր մակարդակներում պետք է վարել գնված, պահեստավորված, փոխադրված և վաճառված քանակությունների մասին համապատասխան գրանցամատյան:

- Տնտեսավարողները պետք է ձգտեն ապահովել ապրանքի հետագծելիությունը՝ առնվազն մինչև տեղական հավաքման կետերը:

- Պահեստավորվող, փոխադրվող և վաճառվող բոլոր մթերքները պետք է պատշաճ կերպով պիտակավորված լինեն, ընդ որում պիտակի վրա պետք է լինեն ապրանքի, քանակի, ծագման, փաթեթավորման ամսաթվի, օրգանական վիճակի և հավաստագրող մարմնի մասին տեղեկություններ:

- Հետբերքահավաքային մշակման (փոխադրում, չորացում, սառեցում, պահեստավորում և այլն) ժամանակ պետք է խուսափել աղտոտող նյութերի հետ որևիցե շփումից:

- Հնարավոր աղտոտիչներ են լվացող միջոցները, ախտահանիչները, կրծողասպան և ծխահարիչ միջոցները և այլն:

- Բերքահավաքի ժամանակ և հետբերքահավաքային բոլոր փուլերում մթերքը պետք է պահպանել պատշաճ սանիտարական պայմաններում:

3.1.1 ՖերրՎայլդի չափորոշիչը և վայրի հավաքի միջազգայնորեն ընդունված իրավակարգավորումները

Հարցաշարը մշակելուց և ոլորտը «ճանաչելուց» առաջ ուսումնասիրվել են վայրի հավաքի միջազգայնորեն ընդունված չափորոշիչները: Այս փաստաթղթում հիշատակված՝ ՖերրՎայլդի 2.0 չափորոշիչը պատրաստվել է ՖերրՎայլդի գործող Չափորաշիչ 1.0-ի և Դեղաբույսերի և անուշաբույր բույսերի հարակայուն վայրի հավաքի միջազգային չափորոշչի (ISSC-MAP)[10] համադրմամբ: Չափորոշիչը կիրառվում է վայրի հավաքի աշխատանքների նկատմամբ՝ որպես հարակայուն

[10] ՖերրՎայլդի չափորոշիչ, http://www.fairwild.org/standard/.

հավաքի գործելակերպերին, արդար առևտրի և սոցիալական պատասխանատվության սկզբունքներին հավատարմության դրսևորում:

ՖերրՎայլդի չափորոշչի նպատակն է ապահովել վայրի բուսատեսակների և պոպուլյացիաների՝ իրենց տեղում երկարաժամկետ պահպանումը և շարունակական օգտագործումը, միևնույն ժամանակ հարգելով արժեշղթայում ներգրավված բոլոր շահակիցների, հատկապես հավաքորդների և աշխատողների մշակույթն ու ավանդույթները և նպաստելով նրանց կենսամակարդակի բարձրացմանը:

ՖերրՎայլդի չափորոշիչն ունի 29 չափանիշներ և 11 սկզբունքներ, որոնք վերաբերում են վայրի հավաքի գործընթացի հարակայունությանը ներկայացվող սոցիալական, բնապահպանական և տնտեսական պահանջներին: Ֆերրվայլդի թե՛ սկզբունքները և թե՛ չափանիշները դասակարգվում են ըստ ստորև թվարկված պահանջների:

Հավաքին ներկայացվող պահանջներ.

- Վայրի հավաքի և պահպանման պահանջներ (Սկզբունքներ 1–2)
- Օրենսդրական և էթիկական պահանջներ (Սկզբունքներ 3–4)
- Սոցիալական և արդար առևտրի պահանջներ (Սկզբունքներ 5–8)
- Կառավարման և բիզնես պահանջներ (Սկզբունքներ 9–10)

Վայրի հավաքի մթերքների գնորդների համար՝

- Գնորդի հանձնառության խթանում (Սկզբունքներ 11)

ՖերրՎայլդի չափորոշչին հետևում է Կատարողականության ցուցանիշների վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվությունը: Այդ ցուցանիշներն օգտագործվում են դիմորդի՝ հավաստագրման պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար: Բացի այդ, Կատարողականության ցուցանիշները կարելի է օգտագործել ստուգման գործընթացում այն դեպքերում, երբ հավաստագրում չի ակնկալվում: Վերահսկողության կետերի համար կիրառվում է վարկանշման համակարգ, ըստ որի տրվում են 0-ից մինչև 3 միավոր (ընդ որում 0-ն ցույց է տալիս վատ կատարողականություն, այն է՝ անհամապատասխանություն, իսկ 3-ը ցույց է տալիս գերազանց կատարողականություն): Հավաստագրում ստանալու համար վայրի հավաքով զբաղվող տնտեսավարողը պետք է բավարարի տվյալ տարվա համար սահմանված նվազագույն պահանջները, ընդ որում ընդհանուր միավորը պետք է ամեն

տարի աճի: Կարելի է կատարողականության լրացուցիչ ցուցանիշներ կիրառել այն վայրի բուսատեսակների համար, որոնք ՖեըրՎայլդ հիմնադրամի կողմից համարվում են հավաքի ոչ հարակայուն գործելակերպերի տեսակետից բարձր ռիսկային:

ՖեըրՎայլդի կողմից վայրի հավաքին ներկայացվող պահանջները[11]

Վայրի հավաքին և պահպանմանը ներկայացվող պահանջներ

- Վայրի պաշարների պահպանում
- Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության բացառում

Հավաքորդների և հավաքման կայանների միջև հարաբերությունները

- Հավաքորդների հետ հարաբերությունները կառուցվում են արդարացի պայմանագրային հիմունքներով
- Խտրականության բացառում
- Երեխաների աշխատանքի բացառում
- Արդար առևտրից ստացվող օգուտներ հավաքորդների համայնքների համար

Աշխատանքային արդար պայմաններ հավաքող և վերամշակող ընկերություններում

- Աշխատանքային հիմնարար սկզբունքներ և իրավունքներ
- Բարվոք, առողջարար աշխատանքային պայմաններ

ՖեըրՎայլդի կողմից հավաստագրված ընկերությունների պարտավորությունները մատակարարների և գնորդների հանդեպ

- Մատակարարման աղբյուրների ներգրավման հարակայուն գործելակերպեր
- Արդար առևտրի գործելակերպեր. Արդարացի գնագոյացում և արդար առևտրի պարգևավճարների վճարում աղբյուրին

Օրենսդրական և էթիկական պահանջներ

- Համապատասխանություն օրենքին, կանոնակարգերին և համաձայնագրերին

[11] ՖեըրՎայլդի պահանջներ, http://www.fairwild.org/requirements/.

- Հաճախորդների իրավունքների հարգում

Կառավարման և բիզնես գործելակերպեր

- Լավագույն կառավարման և բիզնես գործելակերպերի կիրառում
- Ծախսերի թափանցիկ հաշվարկ և օգուտների թափանցիկ բաժանում ամբողջ արժեշղթայում

3.1.2 Վայրի հավաքի բնապահպանական իրավակարգավորումները ՀՀ-ում

Առևտրային նպատակներով վայրի հավաքի դեպքում Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին ՀՀ կառավարության որոշմամբ[12] 1 կգ (քանակությունը տարբեր է՝ կախված բույսի տեսակից) խոտաբույսերի համար նախատեսված է 50-ից 100 դրամ, իսկ 1 կգ մրգերի և հատապտուղների համար՝ 30 դրամ վճար:

Հայաստանում վայրի հավաքի ոլորտը կարգավորող օրենքների և օրենսդրական ակտերի վերաբերյալ լիարժեք տեղեկություններ ստանալու համար դիմել ենք «Հայանտառ» ՊՈԱԿ-ին և ՀՀ բնապահպանության նախարարությանը: Հաշվի առնելով ֆոկուս խմբային քննարկումների և խորազնին հարցազրույցների նախնական արդյունքները, մանրակրկիտ կերպով ուսումնասիրվել են վայրի խոտաբույսերի, հատապտուղների և մրգերի հավաքին վերաբերող օրենսդրական ակտերը, երկրորդական անտառանյութի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները (զեկույցները), ինչպես նաև չարտոնված հավաքի համար կիրառվող սակագները:

Համաձայն «Երկրորդային անտառօգտագործման մասին» ՀՀ գյուղատնտեսության նախարարության թիվ N159 որոշման, անհատ ձեռներեցները, իրավաբանական և ֆիզիկական անձինք (այսուհետ՝ դիմորդներ) կարող են երկրորդական անտառանյութի մթերման իրավունք ձեռք բերել՝ դիմումի N1 և N2 ձևերը[13] ներկայացնելով անտառօգտագործման իրավատիրոջը: Այնուհետև կնքվում է «Երկրորդական անտառանյութի մթերման» պայմանագիրը, որն անտառօգտագործողին թույլ է տալիս հավաքել շինափայտ չհանդիսացող անտառանյութ, մրգեր, հատապտուղներ, ընկուզազգիներ, սունկ, ուտելի բույսեր և

[12] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114090.

[13] «Հայանտառ» ՊՈԱԿ, Անտառային ոլորտի իրավական ակտերի ժաղովածու, էջ 417–423 http://hayantar.am/wp-content/uploads/2015/09/Անտառային-ոլորտի-իրավական-ակտերի-ժողովածու.pdf.

դեղաբույսեր, տեխնիկական հումք, ինչպես նաև մեղվափեթակներ տեղադրել անտառատարածքներում:

Կողմերի միջև պայմանագրի կնքումից հետո անտառօգտագործողին տրվում է անտառային տոմս: Անտառօգտագործողներն իրազեկվում են անտառային պաշարների արդյունավետ օգտագործման մասին ՀՀ օրենքների հնարավոր խախտումների հետևանքների մասին:

Երկրորդական անտառանյութի մթերման հաշվետվությունը. Երկրորդական անտառանյութի մթերման պաշարները և դրանց տարածքային բաշխվածությունը, ինչպես նաև օգտագործման տարեկան ծավալները որոշվում են անտառկառավարման պլաններով: Յուրաքանչյուր անտառտնտեսություն շարունակաբար ներկայացնում է երկրորդական անտառանյութի մթերման հաշվետվություն և տվյալների գրանցում երկրորդական անտառանյութի մթերման գրանցամատյանում՝ համաձայն տվյալ անտառտնտեսության կողմից տրված ու կնքված ձևաթղթի:

Վայրի մրգերի ու ընկուզազգիների հավաքը. Մրգերի և ընկուզազգիների հավաքը կարելի է կատարել բոլոր պետական ու համայնքային անտառատարածքներում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Մրգերն ու ընկուզազգիները պետք է այնպես հավաքել, որ համապատասխան ծառատեսակներին վնաս չպատճառվի:

Հատապտուղների և սնկերի հավաքը. Հատապտուղների և սնկերի հավաքը կարելի է կատարել բոլոր պետական ու համայնքային անտառատարածքներում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Հատապտուղների և սնկերի բերքահավաքը պետք է կատարել այնպիսի մեթոդներով, որոնք բացառում են դրանց վնասումը և չեն խանգարում դրանց բնական վերականգնմանը և վերարտադրությանը:

Ուտելի բույսերի, դեղաբույսերի և տեխնիկական հումքի հավաք. Որպես ուտելի բույսեր, դեղաբույսեր և տեխնիկական հումք օգտագործվող բույսերի և դրանց առանձին մասերի (տերևներ, բողբոջներ, ծաղիկներ, սերմեր, արմատներ, պալարներ) հավաքը կարելի է կատարել բոլոր պետական ու համայնքային անտառատարածքներում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ծառերի բողբոջները պետք է հավաքել նախքան շվակալումը: Բողբոջների հավաքը պետք է դադարեցնել, երբ դրանց ծայրերը սկսում են կանաչ գույն ստանալ: Խոտաբույսերի գետնամերձ մասերը պետք քաղել այնպես, որ արմատները չվնասվեն: Բույսերի տերևները հավաքվում են ծաղկման փուլում, երբ դրանք լիարժեքորեն

ձևավորված են: Ծաղկաբույլը և ծաղիկները պետք է հավաքել ծաղկման սկզբնական փուլում, ընդ որում դրանք պետք է կտրել մեխանիկական սարքերով: Ծաղկաբույլերի և ծաղիկների հավաքի ժամանակ յուրաքանչյուր բույսի վրա պետք է թողնել ծաղիկների ընդհանուր քանակության 20–25 տոկոսը: Բուսական հումքի՝ նույն դաշտից կամ թփուտներից շարունակական հավաքը թույլատրվում է միայն տվյալ բույսի լիարժեք վերականգնումից հետո: Բուսական հումքի շարունակական հավաքի համար կոնկրետ վերջնաժամկետների բացակայության դեպքում անհրաժեշտ է՝

- միամյա բույսերի ծաղկաբույլերը և նույն թփուտներում առկա և հողաբնակ օրգանիզմները հավաքել երկու տարին մեկ անգամ.
- բազմամյա բույսերը հավաքել 2-3 տարին մեկ անգամ՝ կախված բույսի տեսակից և տեղադիրքից.
- բույսերի ստորգետնյա մասերը հավաքել ոչ ավելի, քան 3-5 տարին մեկ անգամ:

Գլուխ 2. Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական ու բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները[14]

Բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության և օգտագործման գծով բնապահպանական իրավախախտումները

Սույն օրենքի համաձայն, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետևյալ գործողությունները համարվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության և օգտագործման գծով բնապահպանական իրավախախտումներ.

- բույսերի և դրանց առանձին մասերի ապօրինի հավաք
- բուսական աշխարհի օգտագործման և պահպանության մասին օրենսդրության այլ խախտումներ, որի հետևանքով վնաս է պատճառվել բուսական աշխարհին

[14] «Հայանտառ» ՊՈԱԿ, Անտառային ոլորտի իրավական ակտերի ժողովածու, «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները», էջ 38–45:

Բնապահպանական իրավախախտումների հետևանքով բուսական աշխարհին պատճառված վնասների հատուցման սակագները

Բնապահպանական իրավախախտումների հետևանքով բուսական աշխարհին պատճառված վնասների հատուցման համար կիրառվում են հետևյալ սակագները.

Բնության հատուկ պահպանվող տարածքներում, դենդրոպարկերում և անտառպուրակներում, անտառպտղատու, անտառսերմնային և ընկուզապտղային տնտեսություններում պտուղների, հատապտուղների, սնկերի, սերմերի, դեղաբույսերի և այլ օգտակար բույսերի ինքնակամ հավաքի դեպքում՝ յուրաքանչյուր կիլոգրամի համար կարող են կիրառվել հետևյալ սակագները՝

- հունական ընկույզ – 3000 դրամ
- Հաճար, կաղին – 2000 դրամ
- Տանձ, խնձոր – 1000 դրամ
- Այլ մրգեր, հատապտուղներ, սերմեր, ***սնկեր, դեղաբույսեր*** և այլ օգտակար բույսեր – 500 դրամ

Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկման կարգը

- Ապօրինի որսված, հավաքված և (կամ) մթերված՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի տեսակների վաճառքի, գնման, ձեռքբերման, փոխանակման, արտահանման և ներմուծման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է համապատասխան տեսակի ապօրինի օգտագործման համար՝ սույն օրենքի 2-րդ գլխով սահմանված սակագների հնգապատիկի չափով:
- Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափը ներառում է վնասված գույքի արժեքը, ինչպես նաև օրենսդրության համաձայն հաշվարկված կենսապաշարների օգտագործման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարի գումարը:

Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկը

Սույն օրենքի համաձայն՝ բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկը կատարում են բնապահպանական պետական տեսուչները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանական օրենսդրության խախտման վերաբերյալ արձանագրության կազմման շրջանակներում՝ որպես արձանագրության անբաժանելի հավելված:

Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման գումարի գանձման կարգը

Սույն օրենքի համաձայն՝ բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման գումարի պետական բյուջե գանձումը կատարվում է բնապահպանական տեսչական մարմնի կողմից իրավախախտման դեպքի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա:

Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ արձանագրությունն ստանալուց հետո՝ իրավախախտողի կողմից 10-օրյա ժամկետում, բանկային համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վնասի հատուցման գումարն ինքնակամ չվճարելու դեպքում գումարի վճարումն ապահովվում է դատական կարգով՝ տեսչական մարմնի ներկայացրած հայցի հիման վրա:

Չնայած վայրի հավաքի վերաբերյալ սահմանված որոշակի կանոնակարգերի և չափորոշիչների առկայությանը (նույնիսկ ՖերրՎայլդն է թարգմանվել հայերեն), շատ թույլ վերահսկողություն է իրականացվում բոլոր չափորոշիչների կիրառման նկատմամբ (բացառությամբ օրգանական չափորոշիչների, որոնք կիրառվում են, երբ վերամշակողը կամ հավաքորդները գտնվում են օրգանական հավաստագրման գործընթացում): Բնական պաշարների չկարգավորված օգտագործումը դժվարացնում է առկա բույսերի վերահաշվարկը և անհնարին է դարձնում մշտադիտարկել և վերահսկել բույսերի և դրանց մասերի ոչ հարակայուն հավաքը:

4. Գնահատման արդյունքները

4.1 Հավաքվող հիմնական մթերքները

Մարզերում վայրի հավաքի տեղամասերի և աճող բույսերի մասին տեղեկությունները ձեռք են բերվում ոլորտի փորձագետների և օրգանական հավաստագրման մարմնի հետ մի շարք հարցազրույցների, ինչպես նաև Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնության (ՕԳԱՆ) տրամադրած տվյալներից: Վերջինս, սկսած 2016թ.-ից, աջակցում է Հայաստանում օրգանական գյուղմթերքի արտադրությանը՝ դրամաշնորհային նախագծերի և իրազեկության բարձրացման արշավների միջոցով: ՕԳԱՆ-ի շրջանակում իրականացվել են փոքր ֆերմերների աջակցության 27 և դրամաշնորհային նպատակային 18 նախագծեր: Գծապատկեր 4-ում պատկերված տարածաշրջանները հավաստագրված են հատապտուղների կամ բույսերի (բուսական թեյերի) օրգանական արտադրության համար:

Ինչպես իմացանք Հայաստանի օրգանական հավաստագրման մարմնից, օրգանական վայրի հավաքի հավաստագրման առումով տարածաշրջանային սահմանափակումներ չկան: Ըստ Կանաչ Կովկաս չափորոշչի, չի կարելի հավաք կատարել միջուկային շինությունների կամ արդյունաբերական կենտրոնների մերձակայքում: Սակայն չի նշվում այդ վայրերից հեռավորությունը: Վայրի բույսերի հավաքի հիմնական վայրերը գտնվում են Լոռու, Տավուշի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզերում: Սակայն հետազոտություններից պարզ դարձավ, որ կոսմետիկայի որոշ արտադրողներ խուսափում են վայրի բույսերի հավաքորդներից բույսեր գնելուց (կայուն մատակարարման և կազմակերպված հավաքի բացակայության պատճառով) և նախընտրում են խոտաբույսեր աճեցնել փոքր հողակտորներում:

Կոսմետիկայի արտադրության համար բույսերի պակաս ունենալու դեպքում նրանք ինքներն են կազմակերպում վայրի հավաքի անհրաժեշտ հմտություններ ունեցող հավաքորդների խմբեր: Պարզ էր նաև, որ յուղի արտադրության համար օգտագործվող որոշ սորտեր սովորաբար չեն հավաքվում գյուղական վայրերում և որ հավաքորդների ուսուցման ամբողջ գործընթացը՝ թե ինչը և ինչպես հավաքել, վերամշակողի համար գլխացավանք է դառնում:

Օրգանական թեյ արտադրողները կամ օրգանականի հավաստագրում ստանալու գործընթացում գտնվող արտադրողները գտնվում են գլխավորապես Լոռու և Տավուշի մարզերում: Օրգանական թեյի արտադրության համար այս երկու մարզերի ընտրության պատճառները տարբեր են. Վերամշակողները հավատացած են, որ

անտառներն ու լեռները, որտեղ այս բույսերն աճում են, էկոլոգիապես մաքուր են, օդն աղտոտված չէ, համն ավելի լավն է, և բույսերն ավելի օգտակար հատկանիշներ ունեն: Բացի այդ, որոշ ՀԿ-ներ այս մարզերում բնակվող կանանց համար ուսուցումներ են անցկացրել վայրի հավաքի վերաբերյալ, որը այդ խմբերի համագործակցությունը վերամշակողների հետ շատ ավելի հեշտացնում է: Դա խնայում է վերամշակողների ժամանակն ու դրամը, որ այլ պարագայում պիտի ծախսվեին՝ այդ խմբերին հավաքվող մթերքի որակին ներկայացվող պահանջներն ու հետբերքահավաքային մշակման ընթացակարգերին ծանոթացնելու համար:

Գծապատկեր 4-ում նաև ցույց են տրված հատապտուղների և մրգերի օրգանական արտադրության հավաստագրում ունեցող արտադրողները Հայաստանի տարածքում: Վայրի հատապտուղների հավաքը հիմնականում կենտրոնացված է երկու մարզերում՝ Լոռու և Տավուշի. մյուս բոլոր դեպքերում հատապտուղներն արտադրվում են արդյունաբերական այգիներում և ոչ թե հավաքվում են անտառներից: Քանի որ հատապտուղները շուտ փչացող են, այս մարզերում հավաքվող վայրի հատապտուղները կամ վաճառվում են միջնորդներին, որոնք էլ՝ արտադրողներին, կամ առաքվում են մոտակա շուկաներ: Ուստի մրգերի ու հատապտուղների վերամշակման գործարանների հիմնումը մարզում, որին կհետևի արտահանումը հարևան Վրաստան (որն ավելի մոտ շուկա է, քան Երևանը) կարող է եզրափակել վայրի հատապտուղների արժեշղթան:

Գծապատկեր 4. Վայրի հավաքի հավաստագրված տեղամասերը Հայաստանում

Աղբյուրը ՝ՕԳԱՆ:

- Խոտաբույսեր
- Հատապտուղներ

4.1.1 Հատապտուղներ

Գյուղաբնակ կանանց հետ անցկացված հարցազրույցների նպատակներից մեկն էլ Հայաստանի մարզերում ամենաշատ հավաքվող վայրի խոտաբույսերի ու հատապտուղների բացահայտումն էր: Գծապատկեր 5-ում ներկայացված վայրի հատապտուղները ամենաշատն են հավաքվում Հայաստանի գյուղաբնակ կանանց կողմից: Այս հատապտուղների հավաքման տարբեր պատճառներ էին բերվում. ոմանք նշում էին, որ իրենք այդ վայրի հատապտուղները հավաքում են, որովհետև իրենց տարածաշրջանի կլիմայական պայմանները նպաստավոր են հենց այդ տեսակների համար: Ուրիշներն էլ բացատրում էին, որ իրենք հետևում են այն վերամշակողներից կամ միջնորդներից եկող պահանջարկին, որոնց հետ իրենք գործակցում են:

Հարցվողների որոշ խմբերի համար հատապտուղների հավաքն ավելի ձեռնտու է, քան վայրի խոտաբույսերի հավաքը, քանի որ հատապտուղների համար վերամշակողների սահմանած պահանջներն ավելի քիչ են և դրանց հետևելն ավելի հեշտ է: Հատապտուղների հավաքի համար հատուկ գործիքներ կամ մեթոդներ չեն օգտագործվում: Որոշ դեպքերում հարցազրույցի մասնակցած կանայք խոսում էին անվտանգության պարզ կանոնների մասին, այն է՝ վնասվածքներից պաշտպանվելու համար համապատասխան ձեռնոցներ, կոշիկներ և հագուստ կրելը: Բացի այդ, որոշ տեսակների, օրինակ՝ մասուրի հավաքման համար պահանջվում է մկրատ:

Վայրի հավաքով զբաղվող՝ հարցազրույցին մասնակցած բոլոր կանայք քաջատեղյակ էին յուրաքանչյուր հատապտղի համար հավաքման ժամանակաշրջանների և հավաքի համար նպաստավոր պայմանների մասին: Նրանցից շատերը նախընտրում են հավաքի գնալ վաղ առավոտյան, երբ դեռ շոգ չի լինում և բավականաչափ ժամանակ է լինում ավելի մեծ քանակություններ հավաքելու համար: Բացի այդ, վերամշակողների հետ հարցազրույցից պարզվեց, որ հատապտուղները, հատկապես մոշը և ազնվամորին, թարմ են մնում, եթե քաղվում են վաղ առավոտյան. հետմիջօրեի արևը փափկացնում է հատապտուղները: Հավաքված թարմ հատապտուղները հավաքորդները սովորաբար վաճառում են տունդարձի ճանապարհին, այլ խոսքով, հավաքորդը հատապտուղը անտառից գյուղ չի հասցնում, այլ նախընտրում է հավաքումից անմիջապես հետո դրանք վաճառել միջնորդներին կամ վերջնական հաճախորդին:

Գծապատկեր 5. Հավաքվող տարածված վայրի հատապտուղները

Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:

Հավաքորդները սովորաբար նախաձեռնություն հանդես չեն բերում վերամշակողներին կոնկրետ տեսակի վայրի մթերք առաջարկելու հարցում: Վերամշակողներն են, որ սովորաբար հետաքրքրվում են հետազոտությունների արդյունքներով՝ հասկանալու համար, թե տվյալ մարզում է՛լ ինչ կարելի է հավաքել, որից հետո գաղափարը քննարկում են իրենց հետ գործակցող կանանց խմբերի հետ:

4.1.2 Խոտաբույսեր

Հարցազրույցներից մի կարևոր առանձնահատկություն պարզ դարձավ, որ հարցազրույցի մասնակցած գյուղաբնակ կանայք ներկայումս ավելի շատ զբաղվում են արդյունաբերական բույսերի և ոչ թե հատապտուղների հավաքով: Շարժառիթները բազմազան էին, բայց դա հաճախ պայմանավորված է լինում խոտաբույսերի հարաճուն պահանջարկով, որը գալիս է վերամշակողների կամ տեղական ՀԿ-ների նախաձեռնած նախագծերից: Սա նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ խոտաբույսերի հավաքման սեզոնն ավելի երկար է, ընդ որում նույն վերամշակողն

ունենում է տարբեր տեսակների պահանջարկ: Սա որոշակի գործարար կապեր է ստեղծում կանանց խմբերի և կոնկրետ վերամշակողի միջև, և հավաքը տեղի է ունենում որոշակի ծավալներ որոշակի ժամանակաշրջանի ընթացքում մատակարարելու վերաբերյալ համաձայնագրի հիման վրա: Այսպիսի գործարար հարաբերությունները պահպանելու և կայուն եկամուտ ապահովելու նպատակով հավաքորդները հաճախ նախընտրում են աշխատել մեկ վերամշակողի հետ և ընտրում են այդ գործընկերոջ կողմից պահանջված մթերքը:

Գյուղաբնակ կանայք ներկայումս հավաքում են խոտաբույսերի լայն ընտրանի, բայց վերամշակողները սովորաբար ձգտում են ընդլայնել արտադրական գիծը և պահանջում են բույսերի նոր տեսակներ: Լավ օրինակ է ուրցադաղձը, որը նախկինում կանայք չէին հավաքում, բայց ներկայումս, արտադրողի կողմից պահանջարկի շնորհիվ, նրանք այն հավաքում են և դեռ ծրագրում են ընդլայնել այս բույսի հավաքի ծավալները: Հարցազրույցներից պարզվեց, որ մարզերում առկա խոտաբույսերի լայն ընտրանին դեռևս պատշաճ ձևով հետազոտված չէ, բայց հսկայական պոտենցիալ ունի բժշկության և կոսմետիկայի բնագավառներում:

Հավաքորդների մեծամասնությունը նշել է, որ խոտաբույսերի մասին գիտելիքները ձեռք են բերել գլխավորապես իրենց պապերից ու տատերից, և նրանցից միայն մի քանիսն ունեին գրքեր կամ տեղեկատվական գրքույկներ, որոնցով կարող են առաջնորդվել վայրի բույսերն ու հատապտուղները ճանաչելու համար: Թեպետ ուրցը, դաղձը, երիցուկը և պատրինջը ամենաշատ հավաքվող բույսերն են, ավելուկը, արևքուրիկը, սինդրիկը և լորենու ծաղիկները նույնպես ժողովրդականություն են ձեռք բերում՝ շնորհիվ արտադրողների կողմից առկա պահանջարկի:

Գծապատկեր 6. Տարածված հավաքվող խոտաբույսեր



Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:

4.2 Հարցվողների ուղղվածությունը

Առաջադրանքին մասնակցած հավաքորդները ներկայացնում էին կանանց երկու կատեգորիա. մեկն առնչվել է միջազգային նախագծերի հետ և աշխատում է որպես ոչ ֆորմալ խումբ, իսկ մյուսում անհատ հավաքորդներ են, ովքեր նախկինում ուսուցում չեն անցել վայրի հավաքին ներկայացվող պահանջների և մեթոդների վերաբերյալ: Միջազգային նախագծերի հետ աշխատելու փորձ ունեցող մասնակիցները Վորլդ Վիժնի կողմից աջակցություն ստացած կանանց խումբն էր (ֆոկուս խմբային քննարկում), Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի շահառուները (անհատական հարցազրույցներ) և Կանաչ արահետ ՀԿ-ի շահառուները Տավուշի մարզից (անհատական հարցազրույցներ):

Մնացած հավաքորդները անհատներ էին Լոռու մարզի Սանահին և Օձուն համայնքներից, ինչպես նաև Կոտայքից և Վայոց Ձորից: Ընդհանուր առմամբ վայրի հավաք կատարողները 30 տարեկանից բարձր կանայք են: Տարիքային ամենամեծ

կատեգորիան կազմված էր 50-ից բարձր տարիքի կանանցից, որոնց մեծամասնությունը որևիցե այլ զբաղվածություն չունի:

Գծապատկեր 7. Վայրի հավաք կատարողների տարիքային բաշխվածությունը



Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:

Հարցազրույցին մասնակցած միջնորդները Ալավերդի քաղաքից և մոտակա գյուղերից էին: Հարցազրույցին մասնակցած վերամշակողների մեջ կային Լոռու մարզում և Հայաստանի այլ վայրերում գտնվող թե՛ բուսական թեյի արտադրամասեր և թե՛ հատապտուղներ վերամշակողներ, այդ թվում Նոյանը, Թամարա ֆրութը, Մարկաձոր ՍՊԸ-ն, Էդնա ՍՊԸ-ն և Այրում ֆրութս կոոպերատիվը, որը հիմնադրվել է Այրումում, Օքսֆամի աջակցությամբ: Այցելած և հարցազրույց անցած սուպերմարկետներն են՝ Երևանի ՍԱՍ-ը և Գրին դեյ օրգանական խանութը:

Բերքահավաքին վերաբերող իրավակարգավորումների և ներկայացվող պահանջների վերաբերյալ հարցազրույցներ անցկացնելու նպատակով այցելել ենք այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են Էկոգլոբը (օրգանական հավաստագրման մարմին) և «Հայանտառ» ՊՈԱԿ-ը:

Հարցվողների ընդհանուր թիվը 39 էր, ներառյալ արժեշղթայի մասնակիցներն ու շահակիցները:

Հարցվողների դերակատարությունը վայրի հավաքի արժեշղթայում և նրանց բաշխվածությունն՝ ըստ մարզերի ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2: Հարցվողների կատեգորիաները և նրանց գտնվելու վայրը

Հարցազրույց	Սյունիք	Կոտայք	Տավուշ	Լոռի	Երևան	Ընդամենը
Հավաքորդներ	—	3	1	14	—	**18**
Վերամշակողներ	1	1	3	1	3	**9**
Միջնորդներ	—	—	—	4	—	**4**
Խանութներ/սրճարաններ	—	—	—	—	3	**3**
ՀԿ-ներ	—	—	—	—	3	**3**
Պետական մարմիններ	—	—	—	—	1	**1**
Ֆինանսական հաստատություններ	—	—	—	—	1	**1**
Ընդամենը	1	4	4	18	11	**39**

4.3 Գնումների աղբյուրները և համագործակցությունը արժեշղթայում

Թե՛ խոտաբույսերի և թե՛ հատապտուղների արժեշղթայի հիմնական խաղորդներն են առաջնային հավաքորդները, միջնորդները, վերամշակող գործարանները և բաշխման կենտրոնները (շուկաներ, խանութներ): Արժեշղթաների որոշ խաղորդներ կարող են դուրս մնալ, եթե որոշակի գործառույթ է իրականացնում շղթայի մեկ այլ խաղորդ: Սույն ուսումնասիրության շրջանակում քննարկված դեպքերում վայրի բույսերի ու հատապտուղների առաջնային հավաքորդների համար հնարավոր շուկաներ կարելի է գտնել Գծապատկեր 8-ում ցույց տրված ձևով:

Գծապատկեր 8. Վայրի հավաքի պոտենցիալ շուկաներ կամ գնումների աղբյուրներ



Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:

Գծապատկեր 8-ից երևում է, որ առաջնային հավաքորդները վաճառում են գլխավորապես միջնորդներին (առևտրականներ/փոխադրողներ), սակայն այն դեպքերում, երբ հավաքորդները ուղղակիորեն գործակցել են վերամշակողի կամ վերջնական սպառողի հետ, մթերքի համար վճարված գինը սովորաբար ավելի բարձր է եղել (արժեշղթայի տարբեր փուլերում վճարված գնի մանրակրկիտ վերլուծությունը ներկայացված է բաժին 4.6-ում):

Համագործակցություն պայմանագրային հիմունքներով

Բոլոր դեպքերում, երբ եղել է հավաքորդ-վերամշակող գործակցություն, հարաբերությունները կարգավորվել են բանավոր համաձայնության հիման վրա: Հավաքորդների խմբի ձևավորումից հետո արտադրող/վերամշակողները խմբին ծանոթացնում են վայրի հավաքին ներկայացվող պահանջներին և բացատրում համաձայնեցված կանոնների խախտման հնարավոր հետևանքների մասին: Հնարավոր հետևանքները տարբեր են՝ սկսած վայրի բույսերի ու հատապտուղների դիմաց ցածրացված գներ վճարելուց մինչև դրանք առհասարակ չընդունելը:

Համենայնդեպս, վերամշակողները ձգտում են կայուն գործակցություն հաստատել, քանի որ մատակարարման շղթայի հաջորդ մակարդակում նրանք օրինական համաձայնությունների են գալիս և պաշտոնական պայմանագրեր են կնքում արտադրանքը մթերային խանութներին մատակարարելու կամ արտահանման վերաբերյալ (խոտաբույսերի դեպքում):

Մատակարարներին աջակցության տրամադրում

Հավաքորդ կանանց աջակցություն կարող է ցուցաբերել վայրի հավաքի արժեշղթայում ընդգրկված շահակիցների երեք խումբ՝ վերամշակողներ/միջնորդներ, տեղական ՀԿ-ներ և միջազգային կազմակերպություններ: Հարկ է նշել, որ այդ շակակիցների աջակցությունը սովորաբար սիստեմատիկ բնույթ չի կրում. դա կարող է լինել մեկանգամյա դրամաշնորհ կամ վերապատրաստում՝ նախքան հավաքորդների հետ գործակցություն սկսելը:

Գծապատկեր 9. Հավաքորդներին աջակցության աղբյուրները և բարձրաձայնված ուղիները

Վերամշակող/միջնորդ

- *Կանխավճար*
- *Ոչ ֆորմալ ուսուցում*
- *Փոխադրում*

Տեղական ՀԿ-ներ

- *Վայրի հավաքի գործիքներ*
- *Ուսուցում և աջակցություն շուկա մուտք գործելու համար*
- *Վերահսկում*

Միջազգային կազմակերպություններ

- *Նպատակային տեխնիկական աջակցություն. չորացման և փաթեթավորման սարքավորումներ*
- *Ուսուցում*

Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:

Աջակցություն վերամշակողի/միջնորդի կողմից. Վայրի բույսերի ու հատապտուղների հավաքչությամբ զբաղվողներին աջակցելու շատ տարածված ձևերն են՝ ձեռք բերվող վայրի մթերքի համար կանխավճարի տրամադրումը, ոչ ֆորմալ ուսուցումը և փոխադրումը: Փոխադրումը հաճախ իրականացնում է վերամշակող/միջնորդը, իսկ արդյունավետ գործակցության դեպքերում հավաքորդները դրա համար չեն վճարում: Հարցազրույցին մասնակցած բոլոր վերամշակողները նշել են, որ իրենք ուսուցում են ապահովել հավաքորդ կանանց խմբերի համար, որը նախևառաջ արվել է արտադրանքի ցանկալի որակն ապահովելու նպատակով: Շատ հազվագյուտ դեպքերում կանխավճարը հավաքորդներին տրվում է, եթե այդ մասին վերջինս խնդրում է:

Աջակցություն տեղական ՀԿ-ներից. Որոշ ՀԿ-ներ հսկայական դեր են խաղացել վայրի հավաքի ամբողջ արժեշղթայում կին ֆերմերներին օժանդակելու գործում: Ինչպես կին հավաքորդներն են մատնանշել, իրենք երբևէ չէին մտածի վայրի հավաքը առևտրային հիմքերի վրա դնելու մասին, եթե չլիներ ՀԿ-ների կողմից աջակցության առաջին ալիքը: Տեղական ՀԿ-ների կողմից տրամադրված ուսուցումներն ընդգրկել են թեմաների լայն բազմազանություն՝ սկսած վայրի բույսերը ճանաչելուց և վերջացրած վայրի հավաքով

զբաղվողների շրջանում առաջնորդության հմտությունների բարելավմամբ: ՀԿ-ների կողմից նպատակային աջակցությունը սովորաբար ներառել է վայրի հավաքի համար անհրաժեշտ գործիքների ու սարքավորումներ տրամադրումը: Որոշ ՀԿ-ներ կազմակերպում են արտադրանքի իրացում իրենց ցանցերում և այդ նպատակով օգտագործում են տվյալ ՀԿ-ի թվային հարթակը կամ ֆեյսբուքյան էջը (հմտություն, որ հավաքորդները չունեն):

Լոռու մարզում իրականացվող նախագծերի շրջանակում կանանց որոշ խմբեր չորանոցների օգտագործման հնարավորություն ստացան, որը նրանց թույլ տվեց ձեռնարկել խոտաբույսերի չորացում և մատակարարված քանակության դիմաց ստանալ ավելի բարձր հատույցներ:

Միջազգային կազմակերպություններ. Կին հավաքորդների խմբերը կարող են շահել միջազգային կազմակերպությունների հետ թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի գործակցությունից: Կանանց այս խմբերում բանակցություններ վարելու և նախագծերի հայտեր գրելու հմտությունների բացակայության պատճառով շատ դժվար է միջազգային կազմակերպություններից ուղղակի աջակցություն ստանալ: Սովորաբար աջակցությունը լինում է վայրի հավաքի գործելակերպերի վերաբերյալ վերապատրաստման կամ վայրի հավաքի ժամանակ կիրառվող հիմնական գործիքների (գլխարկներ, ձեռնոցներ, մկրատներ և այլն) տրամադրման տեսքով: Սակայն շատ հաճախ աջակցող ՀԿ-ները դիմում են միջազգային կազմակերպությունների կողմից հայտարարված դրամաշնորհներ ստանալու համար, որպեսզի ձեռք բերեն սառեցման ու չորացման հարմարանքներ կամ արտադրանքը փաթեթավորելու համար սարքավորումներ: Կանանց խմբերը կարող են անուղղակիորեն օգտվել այն դեպքերում, երբ վերամշակող ձեռնարկությունը գտնվում է իրենց համայնքի մոտակա տարածքում, որը բույսերի ու հատապտուղների պահանջարկ է ստեղծում:

4.4 Վայրի բույսերի հետբերքահավաքային մշակում

Հետբերքահավաքային մշակման ընթացակարգի վերաբերյալ կա մի ընդհանուր դիտարկում. օրգանական արտադրության անցման փուլում գտնվող կամ արդեն օրգանական հավաստագրում ստացած վերամշակողները գործընթացը կազմակերպում են օրգանական չափորոշիչների համաձայն: Քանի որ հստակ պահանջներ են սահմանված, նրանք սովորաբար գնում են խոտաբույսերն ու հատապտուղները, իսկ հետագա քայլերն արդեն ինքնուրույն են անում: Վայրի հավաքի օրգանական չափորոշիչների վերաբերյալ ուսուցումներին

մասնակցությունը, ըստ նրանց, օգնել է ավելի լավ հասկանալ ամբողջ գործընթացը: Վերամշակողների այս կատեգորիաները նաև ավելի կարողունակ են և պատրաստակամ՝ իրենց հերթին հարակայուն բերքահավաքի վերաբերյալ ուսուցում անցկացնելու հավաքորդների համար:

Խնդրո առարկա մթերքները սովորաբար անցնում են հետբերքահավաքային մշակման՝ Գծապատկեր 10-ում ներկայացված քայլերը:

Գծապատկեր 10. Վայրի բույսերի հետբերքահավաքային մշակում



Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:

Չորացում

Իրավիճակն այլ է ոչ օրգանական արտադրողների դեպքում: Փոքր արտադրողների դեպքում չորացման գործընթացը կարելի է իրականացնել կամ բնակարանի որևիցե սենյակում կամ պատշգամբում: Միայն մեկ դեպք է դիտարկվել, երբ հարցազրույցի մասնակցած ՀԿ-ն իրենց հետ համագործակցող կանանց տրամադրել էր խոտաբույսեր չորացնելու համար տարածք և սարքավորումներ: Կին հավաքորդները տեղյակ էին խոտաբույսերի չորացման հիմնական պահանջների մասին. տեղը պետք է լինի մաքուր և լավ օդափոխվող, և պետք է խուսափել արևի ուղիղ ճառագայթներից: Սակայն, ինչպես և դեպքերի մեծամասնությունում, չորացումը կատարվում է տանը, և հնարավոր չէ մշտապես հետևել չորացման ընդունված չափորոշիչներին, իսկ հավաքման ծավալներն էլ հնարավոր չէ ավելացնել, քանի որ չորացման տարածքը սահմանափակ է:

Պահեստավորում

Կին հավաքորդները, որոնցից պահանջվում է մաքրել և չորացնել խոտաբույսերը, նախքան վերամշակողներին հանձնելը սովորաբար դրանք պահեստավորում են թղթե տոպրակներով: Եթե հետբերքահավաքային մշակումը կատարում են հենց հավաքորդները, պահեստավորման համար հատուկ տեղ չի առանձնացվում: Նրանք պահպանում են պահեստավորման համար չոր տեղ ունենալու պահանջը և հաճախ դրանից զատ տեխնիկական այլ պարամետրերի մասին տեղյակ չեն: Ինչ վերաբերում է վերամշակողներին, հատկապես նրանց, ովքեր պարտավոր են օրգանական կանոնակարգերին ենթարկվել, պարզվում է, որ նրանք իրազեկ են մթերքի պահպանման լավագույն գործելակերպերի մասին. ունեն պահեստավորման առանձին շինություններ, որոնք մաքուր են և այլ նպատակներով չեն օգտագործվում, խոնավությունը մշտապես վերահսկողության տակ է, իսկ բույսերը պահպանվում են հերմետիկ ամանների մեջ:

Ավելորդ է ասել, որ նշված պահանջները չեն տարածվում հատապտուղների և մրգերի վրա, որոնք շուտ փչացող մթերքներ են և պետք է հնարավորինս շուտ հասցնել վերամշակման կամ վաճառքի կետ:

Փաթեթավորում

Հարցազրույցին մասնակցած կին հավաքորդներից ոչ ոք փաթեթավորում չի անում վաճառքից առաջ (ոչ հատապտուղների և ոչ էլ խոտաբույսերի առումով): Խոտաբույսերի դեպքում, համապատասխան պահանջի դեպքում նրանք նախ մաքրում, տեսակավորում են, որից հետո բույսերը դնում են տոպրակների մեջ և հանձնում վերամշակողին: Տոպրակների՝ ինչ նյութից լինելը սովորաբար որոշում է վերամշակողը. դա կամ թուղթն է պարկակտորը: Խոտաբույսերի փաթեթավորումը սովորաբար անում են վերամշակողները:

Հատապտուղների դեպքում հավաքից հետո փաթեթավորում չի պահանջվում: Կին հավաքորդները հատապտուղները լցնում են դույլերի մեջ և հանձնում միջնորդին:

4.5 Հմտություններ, տեղեկատվության մատչելիություն և ֆինանսների հասանելիություն

Մասնակցություն ուսուցումներին

Հավաքորդների մեծամասնությունը մասնակցել է վայրի հավաքի վերաբերյալ ուսուցումների. սա վերաբերում է տեղական ՀԿ-ների կամ հենց արտադրողների

կողմից կազմակերպված ֆորմալ ուսուցումներին: Դեպքերի մեծ մասում վայրի մթերք հավաքորդները լիովին բավարարված էին ուսուցումներից, քանի որ իրենք սովորած հմտություններն օգտագործել են բերքահավաքի գործընթացում և պարզել, որ իրենց ստացած տեղեկությունները լիովին համապատասխանում են գործընկեր վերամշակողների ներկայացրած պահանջներին: Սակայն նրանք հետագա վերապատրաստման կարիք ունեն իրենց տարածաշրջանում աճող վայրի խոտաբույսերն ու հատապտուղները ճանաչելու և լիարժեքորեն նույնականացնելու ուղղությամբ: Վայրի հավաք կատարող խմբերի համար ուսուցում անցկացրած հիմնական կազմակերպություններն են եղել Կանաչ արահետը, Վորլդ Վիժնը և ՀԵԿԱ-ն, ինչպես նաև թեյ արտադրող/վերամշակողները (վերջիններիս դեպքում դա եղել է ոչ թե ֆորմալ ուսուցում, այլ ավելի շատ հմտությունների փոխանցում և վայրի հավաքի ոլորտում «կարելիների» և «չի կարելիների» ցանկ): Ի տարբերություն հավաքորդների, հարցազրույցին մասնակցած միջնորդները որևիցե ուսուցման չէին մասնակցել և, ինչպես նշել են, բոլոր պահանջների մասին իրենք հեշտությամբ տեղեկություններ են փոխանակել վերամշակողների և (կամ) հավաքորդների հետ, այնպես որ այս խումբը նույնիսկ չի էլ մտածել, որ կարող է մթերքի հետբերքահավաքային մշակման և փոխադրման վերաբերյալ որոշակի լրացուցիչ տեղեկություններ ստանալու անհրաժեշտություն ծագել: Հարկ է նշել, որ հավաքորդների համար ուսուցումները կանոնավորապես չեն կազմակերպվում. որևէ ֆորմալ ուսուցում կազմակերպելուց հետո պահանջների մասին հետագա հաղորդակցությունը կամ իրենց աշխատանքին վերաբերյալ նոր տեղեկությունները հաղորդվում են հեռախոսով կամ գյուղական համայնքում խմբի մեկ կամ երկու ներկայացուցիչների հետ ոչ ֆորմալ հանդիպման ժամանակ:

Դեպքերի մեծամասնությունում վերամշակողները շատ հետևողական էին հավաքվող խոտաբույսերի որակին ներկայացվող պահանջների հարցում, ուստի հավաքորդների հետ ոչ ֆորմալ ուսուցումներն ու հանդիպումները խիստ կարևոր են եղել՝ նրանց գիտելիքներ ու հմտություններ փոխանցելու տեսակետից: Որոշ դեպքերում վերամշակողները հավաքորդներին ուսուցանում են վայրի մթերքներին ներկայացվող պահանջների մասին՝ նրանց ցույց տալով բույսերի նմուշները. բույսերի գույնը, հասունացման աստիճանը և այն աշխատանքները, որոնք պետք է ձեռնարկել վայրի բույսերը ձեռք բերելուց առաջ:

Հմտություններ, որոնք հավաքորդները պետք է ունենան մատակարարման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար. Հարցազրույցին մասնակցած արտադրողները/վերամշակողները ավելի շատ մտահոգված էին հավաքորդների

«փափուկ հմտությունների», քան թե տեխնիկական հմտությունների հարցում: Հարցազրույց անցնողների բացատրությունից պարզ է դառնում, որ հավաքորդները տեխնիկական հմտություններն ավելի հեշտությամբ են յուրացնում՝ համեմատած «փափուկ հմտությունների» (արդյունավետ կերպով հաղորդակցվելու ունակություն, պատասխանատվության զգացում և համաձայնեցված պայմաններով համագործակցելու պատրաստակամություն) հետ: Խնդիրները, որոնց առերեսվել են վերամշակողները, գլխավորապես վերաբերել են այն հանգամանքին, որ հավաքորդները կարող են չպահպանել բանավոր հաղորդակցության վրա հիմնված գործարար հարաբերությունները և կարող են հավաքված խոտաբույսերն ու հատապտուղները վաճառել այլ վերամշակողների: Սա խաթարում է հումքի անհրաժեշտ ծավալների մատակարարումը և կարող է տվյալ մթերքը սպառողներին մատակարարելու գործում ընդհատումների պատճառ դառնալ: Եվ եթե հավաքորդից վերամշակող քայլում ֆորմալ պայմանագիր չի կնքվում, ապա հավաքորդը թերմատակարարման համար սովորաբար չի տուգանվում: Սակայն վերամշակողից մանրածախ շուկա քայլում մատակարարվող քանակություններն ամրագրված են պայմանագրով, որը նշանակում է, որ վերամշակողը չի կարող իրեն թույլ տալ խախտել պայմանագրի պայմանները:

Խոտաբույսերը ճիշտ չոչացնելու գիտելիքներ. Արտադրող/վերամշակողների հետ անցկացված հարցազրույցներից բացահայտվել է հմտությունների ու գիտելիքների կարիքների բավականին բազմազան համախումբ: Թեյ արտադրողները մտահոգված էին ամբողջ արժեշղթայում բույսերի որակի ապահովմամբ, ընդ որում ոչ բարձր որակը պայմանավորված է խոտաբույսերի չորացման տեխնոլոգիաների վերաբերյալ պատշաճ տեղեկությունների բացակայությամբ, որը, ինչպես նշել են հարցվողները, արտադրական ամբողջ գործընթացի կարևորագույն օղակներից մեկն է և որտեղ բարձր է բորբոսով վարակվելու ռիսկը: Քանի որ ոչ բոլոր հարցվողներն ունեին թեյի արտադրության համար նախատեսված հատուկ չորանոցներ, չորացման գործընթացը վերահսկելը բարդանում է, և մրցակցային շուկայում հաճախորդի բավարարվածության ապահովման տեսակետից խիստ կարևորվում են այդ գործընթացը հնարավորինս անվտանգ դարձնելու վերաբերյալ գիտելիքները, ընդ որում՝ միաժամանակ պահպանելով խոտաբույսերում պարունակվող եթերային յուղերն ու տերևների թարմությունը:

Խոտաբույսերի օգտագործման բարելավման վերաբերյալ գիտելիքներ. Որոշ վերամշակողներ հավաքորդներից պահանջում են խոտաբույսերի միայն տերևները: Մինչդեռ հավաքվող բույսերի այլ մասերը նույնպես կարելի է օգտագործել, օրինակ՝

կոսմետիկ միջոցների ու դողորայքի արտադրության մեջ: Սրանք գաղափարներ են, որ կարելի է ավելի մանրամասնորեն հետազոտել և այնուհետև գործնականորեն կիրառել: Վերամշակողների մեծ մասը անտեղյակ է խոտաբույսերի այլընտրանքային օգտագործման հնարավոր ուղիների մասին, որոնք ինտենսիվ միջամտություն և վերամշակման լրացուցիչ լուրջ ծախսեր չեն պահանջում:

Թեյի վերամշակման վերաբերյալ ընդհանուր գիտելիքներ. Թեպետ որոշ թեյարտադրողներ երկար ժամանակ այս բիզնեսում են, կարծում են որ դեռևս բուսական թեյերի վերամշակման տեխնոլոգիայի վերաբերյալ վերապատրաստման կամ տեղեկատվության փոխանցման կարիք ունեն: Նրանք մասնավորապես հետաքրքրված էին բույսերի բաց կանչ գույնը պահպանելու, տերևների ջարդվածությունից խուսափելու և խոտաբույսերի ապրանքային լավ տեսքի պահպանման, ինչպես նաև չոր բույսերը միջատներից (մասնավորապես ցեցից) զերծ պահելու խնդիրներով:

Բնապահպանության վերաբերյալ գիտելիքներ. Հարցազրույց անցած գրեթե բոլոր վերամշակողները մտահոգված էին բնապահպանական և վայրի հավաքի գործընթացը հարակայուն դարձնելու խնդիրներով: Ըստ վերամշակողների, բնապահպանական հմտությունները կարևոր են թե՛ իրենց համար և թե՛ հավաքորդների համար, ովքեր անմիջական շփման մեջ են բնության հետ: Օրգանական արտադրության անցմամբ հետաքրքրված որոշ վերամշակողներ, օրգանական գործելակերպերը միանշանակորեն ընկալում են որպես ճանապարհ դեպի հարակայուն գյուղատնտեսություն, որը զգալիորեն ավելի քիչ վնաս կհասցնի շրջակա միջավայրին և կապահովի վայրի խոտաբույսերի ու հատապտուղների հետագա մատակարարումները:

Մարկետինգի և ֆինանսների վերաբերյալ գիտելիքներ. Վերամշակողմերի մեծամասնությունը, արդյունավետ կերպով օգտագործելով իրենց ցանցն ու հմտությունները, իր արտադրանքի համար առանձնահատուկ շուկայահատված է գտել հայրենական և արտերկրի շուկաներում: Բայց բուսական թեյերի և վերամշակված վայրի հատապտուղների շուկան մրցակցային է, և այս սպեկտրում մրցակցության մեջ մնալու համար անհրաժեշտ են մարկետինագային հմտություններ: Մատակարարների և պոտենցիալ գործընկերների հետ գործարար հարաբերություններ ձևավորելու և պահպանելու համար կարևոր է ունենալ բանակցային արդյունավետ հմտություններ: Ֆինանսների մասին գիտելիքները հատկապես կարևորել են այն վերամշակողները, ովքեր նոր են բիզնեսում և

շահագրգիռ են հասկանալու արտադրության օպտիմալ մասշտաբները, ներդրումների տնտեսական արդյունավետության վերլուծությունը և ապրանքի գնագոյացման ռազմավարությունը: Սակայն արտադրությանն աջակցող այս ասպեկտները լիովին անտեսվել են հավաքորդ և միջնորդ հարցվողների 79 տոկոսի կողմից (ընդ որում հարցված բոլոր հավաքորդներն ու միջնորդները, այդ թվում արտադրողների 7 տոկոսը, երբևէ չի օգտվել համացանցային մարկետինգից):

Գծապատկեր 11. Համացանցային մարկետինգ ապրանքախթանման նպատակով



Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:

Նոր բիզնես սկսելու կամ գործող բիզնեսն ընդլայնելու պատրաստակամություն

Հարցվողների (այդ թվում՝ հավաքորդներ, վերամշակողներ և միջնորդներ) 88 տոկոսը պատրաստակամություն է հայտնել կամ ընդլայնելու ներկա գործունեությունը կամ նոր բիզնես սկսելու: Հարցվողների (հավաքորդներ և միջնորդներ) միայն 12 տոկոսն է, որ մտադիր չէ կամ ընդլայնել եղածը կամ սկսել նոր բիզնես, որովհետև նրանց պլանները մեծապես կախված են վերամշակողների պլաններից:

Հավաքորդներ. Որոշ հավաքորդների համար վայրի հավաքը նոր բիզնես փորձառություն է (չնայած այն բանին, որ նրանք նախկինում հավաք կատարել են, բայց ոչ՝ դրանից շահույթ ստանալու ակնկալիքով), որը հեռավոր վայրերում բնակվող գյուղացի կանանց համար նոր հնարավորություններ է ստեղծել: Վայրի հավաքի առևտրային ծավալները ծառայեցին որպես եկամտի լրացուցիչ աղբյուր և հնարավորություն տվեցին հոգալ տնային տնտեսության առօրյա ծախսերը: Քանի որ գնալով ավելի մեծ թվով արտադրողներ են հետաքրքրվում վայրի խոտաբույսերով ու հատապտուղներով, հարցվողները նշել են, որ իրենք կարող են ընդլայնել հավաքվող վայրի բույսերի տեսականին, իրենց շրջապատից ավելի մեծ թվով մարդկանց ընդգրկել

այդ գործում և մեծացնել իրենց գործունեության մասշտաբը: Սակայն նրանցից քչերն են իրենց գործունեությունն ընդլայնել՝ ներգրավվելով արժեշղթայի այլ տեսակի գործունեության մեջ: Կոնկրետ մեկ դեպքում վայրի հատապտուղների հավաքով զբաղվող կանայք ավելացրել են գործունեության մասշտաբը՝ ընդգրկելով նաև մոշի և ազնվամորու մշակությունը սեփական տնամերձ հողամասերում: Դեպքերի մեծամասնությունում ընդլայնումը դիտարկվում է որպես լրացուցիչ ֆինանսավորում պահանջող գործունեություն, որի հնարավորությունը գյուղացիները չունեն:

Վերամշակողներ. Հարցված բոլոր վերամշակողները մեծ ցանկություն ունեին ընդլայնելու գործող բիզնեսը կամ գործող բիզնեսի հետ զուգահեռաբար սկսել նորը: Նրանցից ոմանց համար ընդլայնելու հարցում դժվարությունը համագործակցությունն է հավաքորդների հետ, ովքեր, ինչպես արդեն նշել ենք, միշտ չէ որ պատրաստ են համագործակցել համաձայնեցված ժամկետների ու պայմանների հիման վրա: Վերամշակողները հաճախ չեն աշխատում լրիվ հզորությամբ, բայց այսուհանդերձ ընդլայնման կարիք են զգում, որովհետև արտադրանքի պահանջարկը շարունակաբար ավելանում է: Տեղական շուկայում ընդլայման այլընտրանք է դիտարկվում նաև այլ շուկաներ (հիմնականում Ռուսաստան) մուտք գործելը, բայց այսպիսի նախաձեռնությանն էլ խանգարում է այն մտահոգությունը, որ անհրաժեշտ ծավալները անկարող կլինեն մատակարարել:

Միջնորդներ. Միջնորդներից քչերն են, որ վայրի հավաքը համարում են սեզոնային աշխատանք և դրամ վաստակելու ևս մեկ հնարավորություն՝ մշտական աշխատանքին զուգահեռ: Միջնորդների մեծամասնությունը կարողացել է ուժեղ կապեր ստեղծել թե՛ մատակարարների և թե՛ արտադրողների հետ և, հաջողված գործակցության շնորհիվ, մեծ է եղած բիզնեսն ընդլայնելու ցանկությունը: Սակայն ընդլայնումը մեծապես առնչվում է տեխնիկական արդիականացմանը (սառնարան ավտոմեքենաների կամ կոնտեյներների և արդիական ավտոմեքենաների ձեռք բերում): Քանի որ միջնորդներից ոմանք այս բիզնեսում են արդեն մի քանի տարի, նրանք հասկանում են, որ հատապտուղների և խոտաբույսերի մատակարարման ծավալների ընդլայնումը շահույթի ավելացման հնարավորություն է: Նման ընդլայնման օրինակ կարող է լինել մոշի սեփական այգու կամ մրգի վերամշակման սեփական արտադրության հիմնումը, որոնք, սակայն, ֆինանսական ներդրումներ են պահանջում:

4.6 Հավելյալ արժեքներ, յուրաքանչյուր շահակցի ստացած գնանցքը ընտրված արժեշղթայում

4.6.1 Վայրի հատապտուղներ

Ներգրավված շահակիցները. կին հավաքորդներ և միջնորդներ

Վայրի հատապտուղների հավաքման ժամանակաշրջանը սկսվում է հուլիսի կեսին (մոշ) և շարունակվում մինչև հոկտեմբերի սկիզբը (հոն): Կանանց հետ համագործակցող միջնորդները կարող են հավաքորդներին տրամադրել տրանսպորտային միջոցներ և համագործակցության առաջին փուլում հսկել հավաքման գործընթացը: Հազվագյուտ դեպքերում կարող են տրամադրվել նաև հավաքման գործընթացի համար անհրաժեշտ որոշ գործիքներ: Հարցված կին հավաքորդները չեն շեշտադրել անվտանգության պարզ կանոնների, այսինքն՝ վնասվածքներից պաշտպանվելու նպատակով ձեռնոցներ դնելու, համապատասխան կոշիկներ և հագուստ կրելու կարևորությունը:

Վերամշակողների կողմից պահանջված քանակությունն ապահովելու նպատակով երբեմն միջնորդներն իրենք կարող են ընդգրկվել հատապտուղների հավաքման գործընթացում: Սակայն միջնորդները հաճախ սահմանում են հավաքվելիք մթերքի քանակության վերին սահմանը. սովորաբար 200 կգ-ից ավելին չեն վերցնում, որ հասցնեն փոխադրել: Սա նշանակում է, որ հավաքվող քանակությունների ճիշտ պլանավորումը կարևորվում է արժեշղթայի մասնակիցների շահույթներն առավելագույնի հասցնելու առումով: Կախված միջնորդների պահանջներից, հավաքորդները կարող են նախապես մաքրել վայրի հատապտուղները՝ հեռացնել տերևներն ու փշերը: Հավաքման գործընթացին ներկայացվող՝ միջնորդների կողմից սահմանված հիմնական պահանջը մաքուր դույլերով առողջ և ուժեղ պտուղներ մթերելն է:

Հատապտուղների հավաքչությամբ զբաղվելու՝ կին հավաքորդների հիմնական շահադրդվածությունը հեշտ իրականացնելի պահանջներն են: Զբոսաշրջային սեզոնի բարձրակետի ընթացքում կին հավաքորդները հավաքած հատապտուղների մի մասն առանձնացնում են զբոսաշրջիկներին վաճառելու համար:

Սա նշանակում է, որ հավաքորդները չեն ուզում հույսները դնել միայն միջնորդներին վաճառվող քանակությունների վրա, և եթե կա անմիջականորեն սպառողին վաճառելու հնարավորություն, հույս ունեն այդ ձևով ավելի շատ շահույթ ստանալ: Միջնորդներին վաճառելու դեպքում 1 կգ թարմ մոշի համար հավաքորդներին

սովորաբար վճարում են 350-ից մինչև 500 դրամ: Իսկ եթե հաջողում են վաճառել ուղղակիորեն սպառողին, ապա գինը տատանվում է 800-ից մինչև 1000 դրամի սահմաններում՝ կախված վաճառքի կետի գտնվելու վայրից (անտառամերձ խճուղիներ կամ ավելի մեծ քաղաքների շուկաներ):

Ներգրավված շահակիցները. կին հավաքորդներ և միջնորդներ

Դիտարկված մարզերում ոչ հարցված հավաքորդները և ոչ էլ միջնորդները վայրի հատապտուղների վերամշակման համար չունեին պահպանման տարածքներ կամ սառնարաններ: Ինչպես նշել են հարցազրույցների ժամանակ, ամենամեծ պահանջարկը վայելող հատապտուղները (մոշ, ազնվամորի) շատ շուտ փչացող են,

Պահպանում

ուստի միջնորդները առավել հաճախ դրանք չեն պահեստավորում, այլ հատապտուղը տանում են ուղղակիորեն շուկա կամ վերամշակող գործարան (100 տոկոս դեպքերում վճարումը կատարվում է գնման պահին): Քանի որ միջնորդները և (կամ) հավաքորդները հատապտուղները չեն պահեստավորում 2 ժամից ավելի,

Վերամշակում

սովորաբար նրանց տան զով հետնաբակը ծառայում է որպես պահեստարան:

Հարցված միջնորդների ցանցաստեղծման և հաղորդակցական հմտությունների պակասը նրանց հարկադրել է ընտրել հավաքված հատապտղի իրացման հեշտ եղանակ, այն է՝ վաճառել մոտակա շուկաներում: Ինչպես պարզվել է, վայրի հատապտուղների միայն փոխադրումը հավաքման կետերից շուկա, միջնորդների համար ապահովում է 5–50 տոկոսի շահույթի գնանցք (մարժա), ուստի սառնարանային համակարգի մեջ ներդրումը, թեպետ նախատեսվում է, բայց կարճաժամկետ հեռանկարում դեռևս պլանավորված չէ: Միջնորդների շահույթները տարբեր են՝ կախված վաճառքի կետից: Թարմ հատապտուղները վերամշակողներին վաճառվում են մոտ 1 կգ-ը 500-ից 650 դրամով, իսկ վերջնական սպառողը միջնորդից ստանում է կգ-ը մոտ 1000-ից 1200 դրամով:

Ներգրավված շահակիցները. վերամշակող ընկերություններ

Վերամշակում

Գյուղական վայրերի մատակայքում գտնվող վերամշակող գործարանները ունենում են հավաքորդների և միջնորդների իրենց ցանցը: Միջին վերամշակողն ունի մեկ սառնարանային տնտեսություն, որտեղ հատապտուղները պահպանվում են մինչև մթերվի

արտադրական հոսքագիծը գործարկելու համար պահանջվող նվազագույն քանակությունը:

Հատապտուղներից արտադրվող հիմնական մթերքներն են մուրաբաները, հյութերը և ջեմերը: Հաճախ, երբ անհրաժեշտ է լինում հումքի ավելի մեծ քանակություններ, վերամշակողն ավելի բարձր գին է վճարում՝ հավաքորդներին և միջնորդներին շահագրգռելով, որ ավելի շատ մրգեր ու հատապտուղներ մատակարարեն: Սակայն, քանի որ ավելի հեշտ է աշխատել մեկ անձի հետ, քան՝ հավաքորդների խմբի, ընկերությունը կիլոգրամի հաշվարկով մոտ 50 դրամ ավելի է վճարում միջնորդի մատակարարած մթերքի համար, քան՝ անհատ հավաքորդների: Վերջնական մթերքը վաճառվում է տեղական սուպերմարկետներին կամ արտահանվում է: Վերամշակողներին վճարվող արտահանման գինը սովորաբար 20 տոկոսով ավելի բարձր է լինում:

Գծապատկեր 12. Մոշի բնորոշ արժեշղթան



Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:
Ծանոթագրություն. *Վայրի հատապտուղներից ստացված մթերքների գները արտահանման շուկայում մոտավոր հաշվարկով 20 տոկոսով ավելի բարձր են՝

համեմատած Հայաստանի սուպերմարկետներում եղած համնման մթերքների գների հետ:

4.6.2 Վայրի խոտաբույսեր

Ներգրավված շահակիցները. կին հավաքորդներ

Պահանջարկ վայելող վայրի խոտաբույսերի (ուրց, դաղձ, պատրինջ և երիցուկ) հավաքման ժամանակաշրջանը սկսվում է մայիսի կեսին և շարունակվում մինչև հոկտեմբերի սկիզբը: Իդեալական տարբերակում, նախքան հավաքի ժամանակաշրջանի սկիզբը, հավաքորդները արտադրող/վերամշակողներից ուսուցում են ստանում վայրի խոտաբույսերի յուրաքանչյուր տեսակի համար սահմանված պահանջների մասին: Արտադրող/վերամշակողը նշանակում է խմբի ղեկավարին կամ վերջինիս ընտրում են կին հավաքորդները: Խմբերի ղեկավարները կապող օղակ են դառնում արտադրող/վերամշակողի և կին հավաքորդների միջև, հսկելով գործընթացը և բանակցություններ վարելով հավաքված խոտաբույսերի գնի շուրջ: Վայրի խոտաբույսերի հավաքի գործընթացում կարևորվում են բույսի յուրաքանչյուր տեսակի համար սահմանված պահանջները, որոնք կարող են ենթադրել հավաքորդների կողմից որոշակի լրացուցիչ աշխատանքների կատարում և, հետևաբար՝ հավաքման ծախսերի ավելացում:

Հարցված որոշ արտադրող/վերամշակողներ գնում են թարմ խոտաբույսեր, որոնք մաքրման առաջին փուլը չեն անցել: Թարմ խոտաբույսերի գինը տատանվում է 1 կգ-ի համար 400-ից 500 դրամի սահմաններում՝ կախված հավաքման տարածաշրջանից և հավաքորդների փորձից (նրանք, ովքեր նոր-նոր են սկսում այս գործընթացը և շուկայի վերաբերյալ նախնական տեղեկացվածություն չունեն, նույն որակի բույսերի համար ավելի ցածր գներ են պահանջում): Այն արտադրող/վերամշակողները, ովքեր վայրի խոտաբույսերի չորացման առանձին տեղ ունեն, սովորաբար պահանջում են, որ հավաքորդները կատարեն նախնական մաքրում (օրինակ՝ փոշու և անառողջ տերևների հեռացում) և վճարում են 1200-ից 2500 դրամ 1 կգ թարմ վայրի խոտաբույսերի համար: Հավաքորդները առաջին փուլի մաքրումը կատարում են իրենց տանը, և դեպքերի մեծ մասում լրացուցիչ աշխատանքներ կատարելու համար հավաքորդ կանանց որևիցե տեխնիկական աջակցություն չի ցուցաբերվում:

Որոշ արտադրողներ լիարժեք չորացման համար անհրաժեշտ տեղ ու պայմաններ չունեն, ուստի այս գործընթացը վստահում են կին հավաքորդներին: Այսպիսով,

հավաքորդները պատասխանատու են խոտաբույսերը մաքրելու, ցողունները հեռացնելու և տերևները չորացնելու համար: Արտադրողին մնում է միայն փաթեթավորել: Այս դեպքում չոր խոտաբույսերի համար վճարվող գինը տատանվում է 5000-ից 7000 դրամի սահմաններում:

Ներգրավված շահակիցները. կին հավաքորդներ և արտադրողներ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեյի որոշ արտադրողներ արտադրում են կամ

օրգանական թեյ կամ օրգանական արտադրության անցման փուլում են, պահպանման պայմանները հստակ կերպով բավարարում են արտադրության օրգանական չափորոշիչներին: Պահեստային տնտեսությունը պետք է լինի մաքուր և չոր և օգտագործվի միայն տվյալ կոնկրետ մթերքը պահպանելու համար: Պատկերը բոլորովին այլ է ոչ օրգանական արտադրողների պարագայում. հավաքորդների առջև դրվող միակ պահանջը չոր տեղ ունենալն է՝ բույսը խոնավությունից ու բորբոսից զերծ պահելու համար: Եթե հետբերքահավաքային մշակումը կատարում են հավաքորդները, ապա պահպանման համար առանձնացված հատուկ տարածք չկա:

Գործընթացում չի պահպանվում անվտանգության որևիցե պահանջ, իսկ պահպանման եղանակը թողնված է հավաքորդի հայեցողությանը: Եթե դա բավարարում է մթերքի որակի հարցում արտադրողի սպասելիքները, երկու կողմն էլ առանձնապես չեն մտահոգվում տարածքի վերանորոգմամբ կամ պահպանման համար առանձին սենյակ ունենալու անհրաժեշտությամբ:

Ներգրավված շահակիցները. կին հավաքորդներ և արտադրողներ

Վայրի խոտաբույսերի մշակումից առաջ կին հավաքորդների նախաձեռնած

հիմնական աշխատանքներն են՝ մաքրումը, տեսակավորումը, չորացումը և խոտաբույսերը տոպրակների մեջ դնելը: Դարձյալ հարկ է նշել, որ այդ աշխատանքները հավաքորդներին են վստահվում երկու դեպքում՝ եթե արտադրող/վերամշակողը վերամշակման սեփական տարածք չունի կամ եթե հավաքորդների և վերամշակողների միջև երկարամյա գործակցությունը փոխադարձ վստահություն է ստեղծել:

Դեպքերի մեծամասնությունում օրգանական արտադրողներն են, որ ունեն չորանոցներով և փաթեթավորման ավտոմատ մեքենասարքավորումներով հագեցած

գործարաններ: Հավաքորդները, որոնք պարտավորված են կատարել մաքրումը, տեսակավորումը և չորացումը, նաև տոպրակների մեջ տեղադրումն են անում և առաքում արտադրողներին: Հավաքորդներից ոչ մեկը արտադրողին հանձնելուց առաջ ապրանքը չեն փաթեթավորում: Այն արտադրողները, որոնք կատարում են փաթեթավորումը, համարում են, որ այս ձևով վերջնական սպառողին առաքելուց առաջ վերահսկում են մթերքի որակը:

Գծապատկեր 13. Ուրցի բնորոշ արժեշղթան



Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:
Ծանոթագրություն.

*Մաքրման առաջին փուլը չանցած թարմ վայրի ուրցի գները տատանվում են կգ-ը 150-ից 400 դրամի սահմաններում:
**Կախված հավաքորդների իրականացրած հետբերքահավաքային մշակման աշխատանքներից, արտադրողի կողմից վճարվող գինը կարող է տատանվել 600-ից 3500 դրամի սահմաններում (1 կգ թարմ բույսի համարժեքը):
***Վայրի ուրցի թեյի գները կարող են տատանվել 5000-ից 10000 դրամի սահմաններում՝ կախված փաթեթավորման տեսակից և դիզայնից (1 կգ թարմ բույսի համարժեքը):
****Ռուսական շուկա արտահանվող թեյերի համար փոքր գնանցքներ են նախատեսված, իսկ Միացյալ Նահանգների և ԵՄ երկրների մասնագիտացված առանձնահատուկ խանութների համար նախատեսված հայկական թեյերը կարող են վաճառվել մինչև 25 տոկոս հավելագնով:

4.6.3 Բիզնես հնարավորություններ կին ձեռներեցների համար

Մինչ կին ձեռներեցների համար բիզնես հնարավորությունների ստեղծումը, անհրաժեշտ է նախ քննության առնել կին հավաքորդների երկու խմբերի:

Նախկինում ուսուցում անցած կանայք

Լոռու և Տավուշի մարզերում, որտեղ տեղական ՀԿ-ները նախապես ուսուցումներ են անցկացրել, կին հավաքորդները համեմատաբար ավելի կազմակերպված էին, և, որ ամենակարևորն է, արդեն գիտակցում էին վայրի հավաքի շահութաբերության հնարավորությունները: Ինչպես նշել են հարցմանը մասնակցած արտադրող/վերամշակողները, վայրի հավաքի համար կին հավաքորդների խմբեր կազմակերպելը կազմակերպչական աշխատանքի ամենաճանր մասն է եղել: Ավելին, արդեն կազմակերպված կանանց խմբերն ունեին իրենց պարագլուխները, ովքեր նրանց ղեկավարում էին գործընթացի ամբողջ ընթացքում:

Պարագլուխները մշտական կապի մեջ են արտադրող/վերամշակողների հետ, և վերջիններիս հետ սերտ գործակցությամբ են համաձայնեցվում պահանջները, վերջնաժամկետները և գները: Այս խմբերի կին պարագլուխների վարքագծի բնորոշ դրսևորումներից են նախահարձակությունը և շահույթի ձգտումը: Հասկանալով բիզնեսի շահութաբերությունը, պարագլուխները ակտիվորեն փնտրում են վայրի հավաքով հետաքրքրված նոր հավաքորդների, որպեսզի կարողանան ապահովել վերամշակողների կողմից պահանջվող մատակարարման ծավալները:

Ինչ վերաբերում է վայրի մթերքի արտահանմանը, արտերկրի շուկաներ մուտք գործելու համար դեռևս շատ աշխատանք կա անելու: Ներկայումս քիչ թվով արտադրողներ են արտահանում իրենց մթերքները: Արտահանման ծավալները փոքր են և նպատակաուղղված են մի քանի փոքր առանձնահատուկ շուկայահատվածների:

Պատճառները տարբեր են. որոշ արտադրողներ ի վիճակի չեն գործընկերներ գտնել արտերկրում, որոշ արտադրողներ չեն կարողանում ապահովել համասեռ որակյալ խոտաբույսերի մեծ ծավալներ, իսկ ոմանց արտադրական հզորությունն էլ շատ սահմանափակ է: Արտերկրի շուկայում ներմուծող ընկերությունները սովորաբար պահանջում են վերամշակված արդադրանքի մեծ քանակություններ, որը նշանակում է, որ արտահանման պոտենցիալի լիարժեք օգտագործման համար հավաքորդների միջև լավ կազմակերպված համագործակցությունը պարտադիր պայման է:

Ուսուցման և արժեշղթայի խաղորդների համագործակցության հետաքրքիր օրինակ է դիտվել Վարդենիկ գյուղում, որտեղ «Համայնքի զարկերակ» երիտասարդական ՀԿ-ն հիմնադրել և շահագործում էր մի սոցիալական ձեռնարկություն, որտեղ ներգրավված են համայնքի 70 ընտանիքներ: Տեղացի կանայք խոտաբույսեր են հավաքում մոտակա լեռներից, իսկ երիտասարդները ակտիվորեն զբաղվում են արտադրանքի վերամշակմամբ ու փաթեթավորմամբ: Եկամուտների մոտավորապես կեսը վճարվում է որպես աշխատավարձ, իսկ մյուս կեսը ուղղվում է համայնքի զարգացմանը:

Նախկինում ուսուցում չանցած կանայք

Կանանց այս խումբը ամենադժվարն էր բիզնես հնարավորությունների օգտագործման տեսակետից: Նրանց համար վայրի հավաքը ազատ ժամանակ անելիք գործ է՝ իրենց այլ գյուղատնտեսական աշխատանքներին զուգահեռաբար: Համեմատած առաջին խմբի հետ, այս կանայք դժվարությամբ էին ընդունում վայրի հավաքի շահութաբերության և այն որպես իրենց կենսամակարդակը բարձրացնելու հնարավորություն դիտարկելու փաստարկը: Հավաքը կազմակերպված չէ, ընդ որում հավաքի հստակ ժամանակ չեն նշում: Բացի այդ, վայրի հավաքի գործելակերպերի հարակայունությունը կամ դրան առնչվող «կարելիներն» ու «չի կարելիները» պատշաճ կերպով չեն հետազոտվել, դրանով իսկ հարցականի տակ դնելով հավաքի համապատասխանությունը բնապահպանական իրավակարգավորումներին:

Ուստի, խիստ կարևոր է հավաքորդների այս խմբին բացատրել վայրի հավաքի լավագույն գործելակերպերը: Հավաքող խմբերի կին առաջնորդները կամ հաջողակ կին ձեռներեցները կարող են հաղորդակից դարձնել իրենց փորձին, մասնավորապես՝

շեշտադրելով վայրի հավաքի տնտեսական օգուտները: Այդպիսի հանդիպումները կարող են հիմք ծառայել կին հավաքորդների ցանցի հետագա ընդլայնման համար, որն ի վերջո կարող է բերել ընկերակցության ստեղծմանը: Ինչպես պարզվեց արտադրողների հետ հանդիպումների և վավերացման աշխատաժողովների ժամանակ, խիստ անհրաժեշտ է ստեղծել հավաքորդների լավ կազմակերպված թիմ՝ կառավարման որոշակի հմտությունների տիրապետող պատասխանատու ղեկավարներով: Այս իմաստով, մարզերում ավելի մեծ թվով կանանց ուսուցումը և հավաքորդների խմբերի (ընկերակցությունների) ձևավորումը կնպաստի արտադրողների և հավաքորդների միջև երկկողմանի ամուր հարաբերությունների զարգացմանը:

5. Հավաքված արտադրանքը և հնարավոր ընդլայնումը վայրի խոտաբույսերի և հատապտուղների օրինակով

5.1 Հավաքվող հիմնական խոտաբույսերն ու հատապտուղները և վայրի մթերքի առկա և հեռանկարային շուկաները

Տարբեր աղբյուրներ նշում են, որ Հայաստանում աճող մոտավորապես 2000 տեսակի խոտաբույսերն ու բանջարային բույսերը, որոնք կազմում են ընդհանուր բուսական աշխարհի գրեթե 60 տոկոսը, նախկինում օգտագործվել են մի շարք նպատակներով՝ սննդի արտադրություն, քիմիա, բժշկություն և կոսմետիկայի արտադրություն: Ներկայումս օգտագործվում են կենսաբազմազանության 100 տեսակից էլ պակաս մթերքներ, որոնցից լայնորեն օգտագործվում է միայն 30–40 տեսակը:[15]

Ինչ վերաբերում է ICARE հիմնադրամի հետազոտական խմբի կողմից դիտարկված մարզերին, ամենատարածված վայրի խոտաբույսերի ու հատապտուղների տեսակների հավաքի առումով կտրուկ տարբերություններ չեն արձանագրվել մարզերի միջև (տես Աղյուսակ 3-ը): Զարմանալի չէ, որ տարածաշրջանները հարուստ են խոտաբույսերի ու հատապտուղների տարբեր տեսակներով, բայց պոտենցիալը դեռ լիովին բացահայտված չէ մի շարք պատճառներով, այդ թվում՝

- Առկա բնական ռեսուրսների և հավաքվող ծավալների գույքագրման բացակայություն
- Տարածաշրջաններում աճող վայրի բույսերի մասին անիրազեկություն հավաքորդների շրջանում (այդ թվում՝ մարզերի վայրի բուսական աշխարհի պոտենցիալի բացահայտմանն ուղղված հետազոտական նախագծերի և պետական աջակցության բացակայություն)
- Վայրի բույսերի շուկայական պահանջարկի վերաբերյալ տեղեկությունների բացակայություն
- Հավաքի կազմակերպում շաբաթական մեկ անգամ և թիմային վատ աշխատանք
- Մատակարարման աշխատանքների կազմակերման համար արտադրողների կողմից տեխնիկական աջակցության պակաս

Տարածաշրջաններում դիտարկված ամենաշատը հավաքվող խոտաբույսերն են ուրցը, դաղձը, պատրինջը և երիցուկը, որը պայմանավորված է վերամշակող արդյունաբերությունում այս բույսերի մեծ պահանջարկով: Ամենաշատը հավաքվող

[15] AM Partners Consulting Company, "Analysis of Processors and Traders Involved in Value Chain of Selected Biodiversity Products in Armenia."

խոտաբույսերին հետևում են համեմատաբար փոքր քանակություններով (յուրաքանչյուր վայրի խոտաբույսից տարեկան 100 կգ-ից պակաս) հավաքվողները, որովհետև այդ խոտաբույսերի պահանջարկը ցածր է, և հավաքորդներն իրենք առանձնապես շահագրգռված չեն արտադրող/վերամշակողների շրջանում վայրի խոտաբույսերի նոր տեսականու պահանջարկ ձևավորել: Թեպետ տեղական ՀԿ-ները հսկայական ջանքեր են գործադրել կին հավաքորդներին վայրի հավաքի համար անհրաժեշտ հմտություններով զինելու ուղղությամբ, հավաքի գործընթացը դեռևս թույլ է կազմակերպված:

Աղյուսակ 3. Խոտաբույսեր ու հատապտուղներ, որոնց հավաքը Հայաստանում տարածված է

Վայրի խոտաբույսեր	Վայրի հատապտուղներ
Ուրց	Մոշ
Դաղձ	Ազնվամորի
Պատրինջ	Հոն
Երիցուկ	Մասուր
Ավելուկ	Այոճ
Լորենու ծաղիկ	Սինդրիկ
Սրոհունդ	Ձկեռ
Խնկածաղիկ	Կանաչ ընկույզ
Սիբեխ	Հոն
Թրթնջուկ (թթվաշ)	Վայրի խնձոր
Ուրցադաղձ	Վայրի տանձ

Աղբյուրը ՝Սույն հետազոտության արձանագրած արդյունքները:

Իրենց հավաքած խոտաբույսերի տեսականին ընդլայնելու հարցում կին հավաքորդները մեծ կախում ունեն տեղական ՀԿ-ների կամ իրենց հետ գործակցող արտադրող/վերամշակողների հրահանգներից: Մի քանի դեպքերում արտադրողները հավաքորդներին գրքեր են բաժանել որպես Հայաստանում աճող վայրի բույսերը ճանաչելու ուղեցույց:

Արտադրող/վերամշակողները սովորաբար արտադրության մեջ նոր վայրի բույսեր ներմուծելու նախաձեռնություն են հանդես բերում: Վերջերս դիտարկված բուսատեսակներից է ուրցադաղձը, որը ներկայումս օգտագործվում է թեյի արտադրության մեջ: Հյութերի, մուրաբաների և թեյերի այսօրվա շուկաները տեղական սուպերմարկետներն են (մարզերում և Երևանում), թեյի մասնագիտացած խանութները և մարզերում գործող զբոսաշրջային կենտրոնները, որոնք կարող են վաճառել թե՛ բուսական թեյեր և թե՛ կոսմետիկ յուղեր: Ավանդական հայկական միջոցառումները, որոնք համընկնում են զբոսաշրջային սեզոնի հետ, գյուղաբնակ կանանց և փոքր

արտադրողների համար նույնպես համարվում են իրենց ապրանքը վաճառելու հնարավորություն: Ուսումնասիրության շրջանակում վերլուծվել են նաև վայրի խոտաբույսերից ու հատապտուղներից ստացվող վերջնական մթերքի արտահանման հնարավորությունները:

Գծապատկեր 14-ն ներկայացնում է վայրի բույսերից ստացվող մթերքի յուրաքանչյուր կատեգորիայի արտահանման ամենամեծ ուղղությունները:

Գծապատկեր 14. Վայրի մթերքի առկա շուկաները

Աղբյուրը ՝ICARE-ի հարցումներ, առևտրային տվյալներ և արտահանող կազմակերպությունների կայքեր:

Վավերացման աշխատաժողովների ժամանակ շեշտադրվել է, որ թեպետ հաճախ անտեսվում են, բայց կան որոշ վայրի բույսեր ու հատապտուղներ, որոնք կարող են ունենալ շուկայական մեծ ներուժ թե՛ տեղում և թե՛ արտերկրում: Հեռանկարային բույսերի ցանկը ներկայացված է Գծապատկեր 15-ում և 16-ում:

Գծապատկեր 15. Շուկայական ներուժ ունեցող հատապտուղներ

Figure 16: Շուկայական ներուժ ունեցող խոտաբույսեր

Աղբյուրը՝ Սույն հետազոտության արձանագրած արդյունքներ:

Հավելյալ արժեք ստեղծող լրացուցիչ աշխատանքներ, որոնք կարող են իրականացնել կին հավաքորդները: Ֆոկուս խմբերի քննարկումներից արված դիտարկումները կտրուկ կերպով չէին տարբերվում խորազնին հարցազրույցների ժամանակ ձեռք բերված տեղեկություններից: Մասնակիցները խիստ մտահոգված էին հավաքվող խոտաբույսերի և հատապտուղների որակի մասին, և կին հավաքորդների կողմից կատարվելիք լրացուցիչ աշխատանքների հնարավորություն փնտրելու փոխարեն մասնակիցները մատնանշում էին մատակարարվող բույսերի որակի բարձրացման հարցում հավաքորդներին օգնության հետևյալ ձևերը.

- Զարգացնել կանանց առաջնորդական ներուժը
- Հարակայուն և էկոլոգիապես անվտանգ հավաքի գործելակերպերի ցուցադրական ներկայացում
- Արտադրող/վերամշակողի կողմից սահմանված և համաձայնեցված պայմաններին բավարարող մաքուր բերքահավաք

Աշխատաժողովի մասնակիցները համաձայնեցին, որ վերաբերմունքի ու մտածելակերպի մեջ փոփոխություն մտցնելու նպատակով հավաքորդների հետ անհրաժեշտ է կատարել ինտենսիվ աշխատանք: Սա նախևառաջ վերաբերում է խմբում աշխատելու կարողությանը, երբ հավաքը և նախնական վերամշակումն իրականացվում են վերամշակողի կամ որևիցե այլ գործընկեր կազմակերպության կողմից սահմանված պահանջների համաձայն: Սա ապահովում է հավաքվող մթերքի համասեռությունը և բարձր որակը:

6. Եզրակացություններ և առաջարկություններ

Հայաստանի մարզերում վայրի հավաքի ոլորտի աշխուժացման գործում հաստատապես հսկայական դեր են խաղացել տեղական և միջազգային ՀԿ-ների աջակցությունը և կին ձեռներեցների շրջանում առավել կարևոր, աչքի ընկնող առաջնորդական հմտությունների սերմանումը: Աղքատության բարձր ցուցանիշների պայմաններում գյուղական վայրերում վայրի հավաքը մեծ թվով կանանց համար ծառայել է որպես եկամտի հիմնական աղբյուր: Թեև այս ոլորտում արդեն շոշափելի առաջընթաց է արձանագրվել, սակայն վայրի հավաք կատարելու համար կանանց խմբեր ստեղծելը շարունակում է մնալ ղեկավարման ամբողջ աշխատանքի ամենադժվար մասը: Արժեշղթայի գնահատման ժամանակ բարձրացվել է վայրի հավաքի ոչ հարակայուն գործելակերպերի հարցը, որը նշանակում է, որ կին հավաքորդների շրջանում հավելյալ արժեք առաջացնող աշխատանքները խրախուսելուց զատ, առաջնորդ հանդիսացող կին հավաքորդները, ՀԿ-ները և արտադրող/վերամշակողները պետք է լուրջ աշխատանք կատարեն կին հավաքորդներին էկոլոգիապես անվտանգ հավաքի գործելակերպեր ուսուցանելու ուղղությամբ:

Կոսմետիկա արտադրողները, թեյ արտադրողները և ջեմեր, հյութեր և մուրաբաներ արտադրողները հաջողությամբ բացել են այս ապրանքների արտահանման շուկաների դռները: Սակայն, ինչպես հարցումների ժամանակ նշում էին արտադրող/վերամշակողները, ներկայումս արտահանումը նպատակաուղղված է փոքր առանձնահատուկ շուկայահատվածներին և բուտիկ-խանութներին, որովհետև արտադրողները դեռևս ի վիճակի չեն մանրածախ մեծ խանութներին մատակարարել պահանջվող քանակությունները: Ավելի մեծ ծավալների համասեռ արտադրանքի մատակարարումը իրագործելի կարող է դառնալ հավաքորդների միջև և առհասարակ ամբողջ արժեշղթայում համագործակցության ավելի լավ սխեմաներ զարգացնելու միջոցով:

Ոլորտի ներկայացուցիչների հետ վավերացման աշխատաժողովներն ու խորազնին հարցազրույցները վերահաստատեցին, որ վայրի հավաքի ոլորտը իրավական տեսակետից վատ է կարգավորված: Չնայած օրենսդրորեն հստակ կերպով ամրագրված են բնապահպանական վճարներ, սակայն վճարման ընթացակարգը և կարգավորող/լիազոր մարմինը հստակորեն սահմանված չեն, որը սահմանված վճարների հնարավոր անհարկիության մասին կասկածների տեղիք է տալիս: Ով է վճարում հարկերը, որն է կիրառվող հարկի չափը, և որ ամենակարևորն է, պետական

որ մարմինը/կազմակերպությունն է իրավասու հավաքել հարկերը. սրանք հարցեր են, որոնք խանգարում են ոլորտի բնականոն զարգացմանը:

Վայրի հավաքի ոլորտի հարակայուն զարգացմանն ուղղված առաջարկությունների խումբը ներառում է մակրո- և միկրոմակարդակների առաջարկություններ: Մակրոմակարդակը վերաբերում է առաջարկությունների այն խմբին, որոնք ուղղված են կառավարական կառույցներին՝ իրավապահ և ղեկավար մարմիններին: Այդ առաջարկությունները կարող են նպաստավոր միջավայր ստեղծել ոլորտի զարգացման համար և բարելավել վայրի հավաքի ոլորտի՝ արտահանման ներուժը: Մյուս կողմից, միկրոմակարդակի առաջարկությունները նպատակաուղղված են արժեշղթայի անմիջական մասնակիցների կարողականության զարգացմանը և կարող են իրականացվել մասնակիցների կամ գործընկեր ՀԿ-ների կողմից:

Մակրոմակարդակի առաջարկություններ

Վայրի հավաքի ոլորտի իրավակարգավորումների բարելավում. Ոչ հարակայուն հավաքի գործելակերպերի բարելավման համար անհրաժեշտ կարևորագույն քայլերից մեկը վայրի հավաքի ոլորտը կարգավորող գործող օրենսդրության վերանայումն է: Մասնավորապես, պետք է մանրակրկիտ կերպով քննության առնել բնապահպանական հարկերի և այդ հարկերը սահմանելու ու գանձելու գործում պետության դերի մասին կետերը: Համաձայն Հայաստանի օրենսդրության, առևտրային նպատակներով վայրի հավաք իրականացնելու թույլտվության համար գանձվող գումարը մեծ չէ և հավաքորդները հեշտությամբ կարող են մուծել այն, սակայն նրանցից շատերը տեղյակ չեն գործող պահանջների մասին: Բացի դրանից, շատ դժվար է մշակել վճարումը պարտադրող մեծանիզմներ: Սա իշխանություններին հարկադրեց վճարները գանձել հավաքված վայրի հումքից վերամշակված մթերքների արտահանողներից, որն անհավասար մրցակցություն է ստեղծում արտադրանքի արտահանում կատարող վերամշակողների և այն տեղական շուկայում վաճառող վերամշակողների միջև:

Արտահանման ներուժի ընդլայնում. Ուսումնասիրությամբ պարզվեց, որ թեյի ամենամեծ քանակություններ ներմուծող երկրներն են Մարոկոն, Միացյալ Նահանգները, Ֆրանսիան և Գերմանիան: Հետագա հետազոտությունը ցույց տվեց, որ, սեփական սպառումից զատ, Մարոկոն թեյ է ներմուծում նաև հետագա վերամշակման ու արտահանման նպատակով: Սա նշանակում է, որ Մարոկոյի շուկա մուտք գործելու համար հայաստանյան արտադրողները հարկադրված կլինեն կապեր հաստատել վերամշակող մեծ ձեռնարկությունների (որոնք կարող են մթերումն ու առաքումը

իրենք անել) և ոչ թե սուպերմարկետների ու խանութների հետ, ընդ որում հարկադրված կլինեն մեծաքանակ մատակարարումներ կատարել: Սակայն Միացյալ Նահանգների և ԵՄ շուկաներ մուտք գործելու համար հայաստանյան վերամշակողները հարկադրված կլինեն մտնել մանրածախ/սպառողական շուկա և ապրանքի մաքրման, չորացման և փաթեթավորման գործընթացները համապատասխանեցնել սննդի անվտանգության կանոնակարգերի պահանջներին:

Կառավարության և առևտրի զարգացման կազմակերպությունների կողմից կարող է անհրաժեշտ լինել արտահանման խթանման միջոցառումներ իրականացնել: Քանի որ Հայաստանն արդեն օգտվում է ԵՄ երկրների հետ «Արտոնությունների ընդհանրացված համակարգի» (GSP+) ընձեռած առևտրային արտոնություններից, շուկա մուտք գործելուն այլ տեխնիկական արգելքներ չեն խանգարի, բացի որակի համապատասխանությունից: Այս դեպքում օրգանական հավաստագրումը (նախընտրելի է՝ ԵՄ շուկաների կողմից ճանաչված չափորոշչով) կարող է ծառայել որպես արտադրանքի որակի ապացույց: Ամփոփելով նշենք, որ թեպետ մեծածախ շուկան կարող է գրավիչ լինել, բայց արտադրանքի այն ծավալները, որ Հայաստանը կարող է ապահովել, ավելի նպատակահարմար կլինի ուշադրությունը կենտրոնացնել առանձնահատուկ շուկայահատվածների և հայկական մեծաթիվ համայնքներ ունեցող ԵՄ, Ռուսաստանի և Միացյալ Նահանգների մեծաշահ շուկաները:

Սոցիալական ձեռներեցության խթանումը համայնքներում. Սոցիալական ձեռներեցության հաջողված դեպքերը պետք է պատշաճ կերպով ուսումնասիրել և դրանց փորձը տարածել դիտարկված մարզերում: Կին հավաքորդները պետք է լավագույնս տեղեկացվեն այն օգուտների մասին, որ կարող է առաջարկել սոցիալական ձեռներեցությունը, ինչպես նաև պետք է օգտագործել գյուղատնտեսության ոլորտում հաջողության հասած սոցիալական ձեռներեցների փորձը: Ճիշտ ձևավորված սոցիալական ձեռներեցությունը վայրի խոտաբույսերի և հատապտուղների աճող պահանջարկը բավարարելու գործում լուծումներից մեկն է: Շահադրդված և արդյունքին միտված կազմակերպող թիմի առկայության պարագայում վայրի բույսերի վերամշակման սոցիալական ձեռնարկությունը կարող է կենսունակ լուծում լինել դիտարկված տարածաշրջանների տնտեսապես խոցելի գյուղերի համար:

Հայաստանի կենսաբազմազանության վերաբերյալ հետազոտությունների խթանումը. Հաստատակամորեն խորհուրդ է տրվում մարզերում կատարել վայրի բույսերի և որակական ու քանակական առումով բնության կարողականության վերահաշվարկ:

Պետք է որ պարզ լինի, որ Հայաստանում շատ չեն կոնսաբազմազանության վերաբերյալ ինտենսիվ հետազոտական նախագծերը, որոնք իրականացվում են կին հավաքորդների հետ համագործակցող արտադրող/վերամշակողների կամ ՀԿ-ների կողմից:

Միկրոմակարդակի առաջարկություններ

Ընդլայնում դեպի այլ աշխատանքներ արժեշղթայում. Հայաստանում վայրի հավաքի իրականացման հաջողված դեպքերը միանշանակորեն ապացուցել են, որ կին հավաքորդները կարող են մեծացնել իրենց շահույթի գնանցքը՝ իրենց գործունեությունն ընդլայնելով դեպի այնպիսի գործունեություն, որ սովորաբար միջնորդները կամ վերամշակողներն են անում: Հավաքորդների այն խմբերը, որոնք կարողանում են վայրի խոտաբույսերը մաքրել, չորացնել և տեսակավորել, ինչպես նաև նրանք, ովքեր հատապտուղները կարողանում են առաքել վերջնական սպառողին, ստանում են ավելի բարձր շահույթներ:

Փորձի փոխանակման աշխատաժողովների կազմակերպում. Հավաքող խմբերի կին առաջնորդները կամ հաջողակ կին ձեռներեցները կարող են իրենց փորձը փոխանցել այլոց, մասնավորապես՝ շեշտադրելով վայրի հավաքի տնտեսական օգուտները: Այդ հանդիպումները կարող են հիմք ծառայել կին հավաքորդների ցանցի հետագա ընդլայնման համար, որն ի վերջո կարող է հանգեցնել ընկերակցության ստեղծմանը:

Կարելի է տրամադրել ուսուցում հետևյալ թեմաներով.

- ***Վայրի հավաքի հարակայուն գործելակերպեր.*** Հարցված բոլոր արտադրող/վերամշակողները հաստատակամորեն մատնաշում էին վայրի խոտաբույսերի համասեռ որակի անհրաժեշտությունը՝ նախապես որոշարկված քանակություններով: Այս նպատակին հասնելու համար արտադրող/վերամշակողները պետք է նախաձեռնություն հանդես բերեն բերքահավաքից առաջ կազմակերպելու ուսուցում՝ կին հավաքորդներին վայրի հավաքի հարակայուն գործելակերպերին ծանոթացնելու և անզգույշ հավաքի հետևանքով բնապահպանական հնարավոր վնասների մասին տեղեկացնելու նպատակով: Փաստ է, որ կին առաջնորդ ունեցող խմբերն ավելի արդյունավետ են աշխատում, ուստի նախ պետք է բացահայտել կին առաջնորդների, որից հետ նրանց վերապատրաստել, որպեսզի կարողանան առաջնորդել թիմին:
- ***Ծախսերի և օգուտների հաշվարկ/ֆինանսների հիմունքներ.*** Ուսումնասիրության՝ կարիքների գնահատման մասը պարզեց, որ բազմաթիվ

հավաքորդներ երբևէ չեն խորհել հավելյալ արժեք առաջացնող որևիցե գործունեության մասին, որը, իրականացնելու դեպքում, կարող է ավելի մեծ շահութաբերություն ապահովել իրենց համար: Ֆինանսական գրագիտության բարձրացումը նրանց կարող է թույլ տալ կատարել այլընտրանքային տարբերակների ֆինանսական գնահատում և հաշվարկել լրացուցիչ գործառնությունների իրականացման հետ կապված շահույթները:

- ***Համացանցային մարկետինգի հիմունքներ.*** Մրգերի և հատապտուղների վերամշակողների, ինչպես նաև խոտաբույսերի վերամշակողների ու արտահանողների կոնտակտային տվյալները զետեղված են տարբեր կայքերում, ինչպես օրինակ՝ Սփյուռ գործարար տեղեկատուում: Համացանցային որոնման համակարգերը և հնարավոր հաճախորդի հետ կապ հաստատելու կարողությունը հավաքորդներին թույլ կտան դուրս գալ դեպի խոտաբույսերի ու հատապտուղների շուկաներ:
- ***Արդյունավետ համագործակցություն/թիմային աշխատանք.*** Միջնորդներն ու վերամշակողները հաճախ ձգտում են արտադրանքի մեծ քանակություններ ձեռք բերել, որպեսզի իջեցնեն միավոր հումքի փոխադրման ծախսը: Սակայն, մասնավորապես թարմ խոտաբույսերի և հատապտուղների դեպքում, մեկ հավաքորդը ի վիճակի չի լինի մեծ ծավալներ ապահովել նույն օրվա ընթացքում (հաճախ հավաքումից մինչև վերամշակում շատ քիչ ժամանակ է մնում, քանի որ մթերքները շուտ փչացող են), ուստի մի քանի հավաքորդների համագործակցությունը կդյուրինացնի մուտքը շուկա:
- ***Առաջնորդության հմտություններ.*** Վերամշակողները կամ միջնորդները հաճախ ցանկություն չեն ունենում ժամանակ ծախսել անհատապես բոլոր հավաքորդների հետ կապ հաստատելու համար և նախընտրում են գործ ունենալ խմբի ղեկավարի հետ, ով կազմակերպում է հավաքորդներին և հանդես գալիս որպես կապող օղակ՝ խմբակիցներին մթերվող ապրանքի որակի, քանակի և վճարման պայմանների մասին իրազեկելու նպատակով: Այսպիսով, առաջնորդական և ձեռնարկչական հմտությունների կատարելագործման միջոցով բարելավվում է գործընկերությունը արժեշղթայի խաղորդների միջև:

Հետազոտությունների խրախուսում. Բացի ավելի մեծամասշտաբ ուսումնասիրություններից, որոնք կարելի է իրականացնել պետական կամ զարգացման ծրագրերի միջոցով, մասնավոր հատվածին պետք է խրախուսել, որ իրենց սեփական հետազոտությունն անցկացնեն՝ Հայաստանում աճող և երկրում ու արտերկրում պահանջարկ վայելող վայրի բույսերի ու հատապտուղների ամբողջ բազմազանության մասին տեղեկություններ ունենալու նպատակով:

Արտադրող/վերամշակողները պետք է թարմ տեղեկություններ տարածեն կին հավաքորդների կողմից պահանջարկված վայրի բույսերի ու հատապտուղների վերաբերյալ, և նրանց խրախուսել, որ մատակարարեն նոր տեսակներ:

Արտադրանքի այլընտրանքային արժեշղթայի զարգացումը. Վայրի բույսերի վերամշակման ոլորտում աշխարհում ամենախոստումնալից միտումներից մեկը եթերային յուղերի արտադրությունն է: Թեպետ եթերային յուղերը մեծ պահանջարկ են վայելում կոսմետիկայի և բժշկության ոլորտներում, դրանք Հայաստանում քիչ են արտադրվում: Արժեշղթայի ուսումնասիրությունից պարզվեց, որ վայրի հավաքի մեծ քանակությամբ ենթամթերքներ (օրինակ՝ խոտաբույսերի ցողունները և հատապտուղների ու մրգերի կորիզները) թափվում են: Եթե այդ ենթամթերքները վերամշակվեն եթերային յուղի, ապա կարող են լրացուցիչ եկամուտ ապահովել արժեշղթայի բոլոր մասնակիցների համար:

Օգտագործված գրականություն

1. AM Partners Consulting Company, “Analysis of Processors and Traders involved in Value Chain of Selected Biodiversity Products in Armenia.”

2. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ (ARLIS) ՀՀ Կառավարության որոշումը բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114090

3. Armenia/Gender Project: Women Business Association Led PPD in Armenia by Gayane Mkrtchyan, http://www.publicprivatedialogue.org/workshop%202017/2017%20-%20Public%20Private%20Dialogue%20in%20Armenia.pdf

4. «Հայանտառ» ՊՈԱԿ, Անտառային ոլորտի իրավական ակտերի ժողովածու, էջ 417–423 - http://hayantar.am/

5. Asian Development Bank. 2015. Armenia Country Gender Assessment. https://www.adb.org/sites/default/files/institutional-document/162152/arm-country-gender-assessment.pdf

6. Centre for the Promotion of Imports from Developing Countries of the Netherlands Ministry of Foreign Affairs, “Which trends offer opportunities on the European spices and herbs market?” https://www.cbi.eu/market-information/spices-herbs/trends/

7. Ecoglobe LLC ‘Green Caucasus Standard’, http://ecoglobe.com/wp-content/uploads/2013/12/10.3-Green-Caucasus-Standard-ENG_10.05.17_clean.pdf

8. FairWild Standard, http://www.fairwild.org/standard/

9. Harnischfeger, G. ICMAP News, No. 7, June 12–14, 2000, “Guideline on the Commercial Collection of Plant Material from the Environment for Medicinal Purposes,” http://www.fao.org/docrep/005/y4496e/y4496e35.htm

10. ICARE Foundation - Agricultural Census Factsheets/Women in Agriculture, https://icare.am/wp-content/uploads/2017/12/arm-agriculture-FactSheets1.pdf)

11. IFOAM Organics International. “Overview of World Production and Marketing of Organic Wild Collected Products,” http://www.organic-services.com/fileadmin/files/05publications/Studies/World_Production_and_Marketing_of_Organic_Wild_Collected_Products_final.pdf

12. National Statistical Services. Armenia Poverty Profile in 2008–2016, http://www.armstat.am/file/article/poverty_2017_english_2.pdf

13. UNFPA "Men and Gender Equality in Armenia – Yerevan, 2016," https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/MEN%20AND%20GENDER%20EQUALITY_Final_0.pdf

Հավելված

Հավելված 1. Վայրի հավաքորդի հարցաշար

Անունը _____

Հասցեն _____

Կոոպերատիվի անվանումը, եթե կիրառելի է

_____

Հեռախոսի համարը _____

Նշում զրուցավարի համար. *Բազմակի պատասխան ենթադրող հարցերի դեպքում նշեք ապրանքը*

Բաժին 1. Հավաքող անձնակազմը և հավաքի գործընթացը

1.1. Ինչպե՞ս եք որոշում, թե որ վայրի բույսն եք հավաքելու:

1.2. Երբևէ որևիցե ուսուցում անցե՞լ եք կամ հրահանգներ ստացե՞լ եք վայրի հավաք կատարելու վերաբերյալ:
Այո (Խնդրում եմ նշել)_____ Ոչ_____

1.3. Խնդրում են նշել վայրի հավաքի ենթարկվող մթերքը, բերքահավաքի համապատասխան ժամանակաշրջանները, հավաքման մեթոդները և պայմանները:

Վայրի մթերքը	Վայրի հավաքի ժամանակաշրջանը	Վայրի հավաքի՝ օգտագործվող մեթոդներն ու գործիքները	Բնապահպանական պայմանները վայրի հավաքի ընթացքում (եղանակ, հողի խոնավություն)

1.4. Խնդրում եմ նշել վտանգված բոլոր բուսատեսակները, որոնց հավաքն արգելված է ձեր տարածաշրջանում:

1.5. Կա՞ արդյոք կոնկրետ ժամանակամիջոց, երբ որևիցե բույսի հավաքն արգելված է: Եթե այո, խնդրում են նշել բույսն ու ժամանակամիջոցը:

1.6. Գործու՞մ են արդյոք վայրի հավաքի թույլտվություններ: Խնդրում եմ նշել այն իրավակարգավորումների մասին, որոնք ազդեցություն ունեն այս գործունեության վրա:

1.7. Հավաքվող որևիցե վայրի բույսի վերաբերյալ կա՞ն արդյոք վերամշակողի, վերջնական սպառողի կամ պետական մարմնի կողմից սահմանված կոնկրետ պահանջներ: Եթե կան, խնդրում եմ նշել բույսը և կոնկրետ պահանջները:

1.8. Ձեր նկատած ո՞ր գործելակերպերն են, որ կարող են բացասական ազդեցություն ունենալ հաջորդ տարվա բերքի վրա:

Բաժին 2. Վայրի խոտաբույսերի և հատապտուղների հետբերքահավաքային մշակում

2.1. Վայրի մթերքը վաճառելուց առաջ կա՞ արդյոք որևիցե այլ գործողություն, որ դուք կատարում եք (տեսակավորում, մաքրում, պահեստավորում, չորացում, պիտակավորում և այլն): (***Ջրուցավարի համար.*** *եթե այս գործողություններից որևիցե մեկը կատարվում է, ապա անցեք հարց 2.2-ին, այլապես շարունակեք Բաժին 3-ից:)*

2.2. Արդյոք վայրի մթերքը մաքրու՞մ եք մոլախոտերից (եթե կիրառելի է) և լվանու՞մ եք:
Այո_____ Ոչ_____

2.3. Եթե հավաքված մթերքը պահեստավորում եք, ապա ինչպիսի՞ն են պահպանման պայմանները (ունե՞ք արդյոք դրա համար հատուկ տարածք, արդյոք այն չո՞ր է, մու՞թ է, էլ ինչի՞ համար է այն օգտագործվում):

2.4. Եթե դուք խոտաբույսը չորացնում եք, ապա չորացման ի՞նչ պայմաններ ունեք (ունե՞ք արդյոք դրա համար հատուկ տարածք, արդյոք այն չո՞ր է, մու՞թ է, էլ ինչի՞ համար եք այն օգտագործում):

2.5. Արդյոք փաթեթավորու՞մ և պիտակավորու՞մ եք մթերքը:
Այո_____ Ոչ_____

Բաժին 3. Արժեշղթա

3.1. Խնդրում եմ նշել վաճառքի մասնաբաժինը և վաճառքի գինը գնորդների յուրաքանչյուր խմբի և մթերքի յուրաքանչյուր տեսակի համար:

Վայրի մթերք	**Հնարավոր գնորդներ**	**Վաճառքի մասնաբաժինն ըստ գնորդների**	**Վաճառքի գինն ըստ գնորդի (դրամ)**
	Առևտրական/փոխադրող Վերամշակող Վերջնական սպառող Այլ (հստակեցնել)	_____% _____% _____% _____%	_____դրամ _____ դրամ

			_____ դրամ _____ դրամ
	Առևտրական/փոխադրող Վերամշակող Վերջնական սպառող Այլ (հստակեցնել)	_____% _____% _____% _____%	_____դրամ _____ դրամ _____ դրամ _____ դրամ
	Առևտրական/փոխադրող Վերամշակող Վերջնական սպառող Այլ (հստակեցնել)	_____% _____% _____% _____%	_____դրամ _____ դրամ _____ դրամ _____ դրամ
	Առևտրական/փոխադրող Վերամշակող Վերջնական սպառող Այլ (հստակեցնել)	_____% _____% _____% _____%	_____դրամ _____ դրամ _____ դրամ _____ դրամ

3.2.Արդյոք որևիցե աջակցություն ստանու՞մ եք վերամշակողից/գնորդից
*(**Զրուցավարի համար.** Կանխավճար, փոխադրում, արկղեր, ուսուցում և այլն)*

3.3.Արդյոք պայմանագիր կնքու՞մ եք վերամշակողի/գնորդի հետ:

Այո_____ Ոչ_____

3.4.Անհրաժեշտության դեպքում կարո՞ղ եք փոխել վերամշակողին/գնորդին: Ինչու՞:
_____

3.5.Ձեզ ե՞րբ են վճարել վայրի մթերքի դիմաց, խնդրում եմ ընտրել մեկ տարբերակ:

Ինձ վճարել են նախքան առաքումը	Ինձ վճարել են առաքման պահին	Ինձ վճարել են
		առաքումից ____ օր անց

3.6.Գո՞հ եք վերամշակողների/գնորդների հետ հարաբերություններից: Խնդրում եմ բացատրել:

3.7.Արդյոք համագործակցու՞մ եք այլ հավաքորդների կամ ոլորտում գործող ընկերակցությունների հետ: Եթե այո, խնդրում եմ նկարագրել, թե ինչպես:

Բաժին 4. Տեղեկատվության մատչելիությունը և ֆինանսների հասանելիությունը

4.1.Ինչպե՞ս եք բացահայտում ապրանքի վաճառքի գինը և այն շուկան, որտեղ կուզենայիք վաճառել այն:

4.2.Ձեր գործունեության շահութաբերությունն ավելացնելու համար ի՞նչ տեղեկատվության/հմտությունների/գիտելիքների կարիք ունեք: (***Զրուցավարի համար.*** *շուկայում առկա գները, որոնք կարելի է օգտագործել՝ որոշելու համար, թե ինչ հավաքել. առևտրականների հետ հաղորդակցության/սակարկելու հմտություններ. մարկետինգային հմտություններ, որոնք թույլ կտան հավելյալ արժեք ավելացնել ձեր ապրանքին նախքան վաճառքի հանելը և այլն):*

4.3.Արդյոք համացանցային մարկետինգից օգտվու՞մ եք աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և վայրի հավաքչության շահութաբերությունը ավելացնելու համար:

4.4.Արդյոք հետաքրքրվա՞ծ եք նոր բիզնես սկսելով կամ գործող բիզնեսն ընդլայնելով: Խնդրում եմ բացատրել:

4.5.Ինչպե՞ս կարող եք ստանալ նոր բիզնես սկսելու կամ գործող բիզնեսին օժանդակելու համար անհրաժեշտ նախնական ֆինանսավորումը:

Հավելված 2. Սննդի վերամշակման ընկերությունների հարցաշար

Ընկերության անվանումը և իրավական կարգավիճակը

_____

Հասցեն _____

Կոնտակտային անձը _____Պաշտոնը_____

Հեռախոսահամարը_____

Նշում զրուցավարի համար. *Բազմակի պատասխաններ ենթադրող բոլոր հարցերի դեպքում խնդրում ենք հստակեցրեք բույսը:*

Բաժին 1. Հավաքող անձնակազմը և հավաքի գործընթացը

1.1. Վայրի մթերք գնելիս որո՞նք են ամենամեծ խնդիրները:
1.2. Ունե՞ք արդյոք հավաքվող վայրի բույսերին ներկայացվող պահանջներ, այդ թվում՝ որակին, մաքրությանը և այլնին առնչվող:
1.3. Արդյոք ուսուցում անցկացնու՞մ եք հավաքորդների համար կամ ինչ-որ ձևով նրանց տեղեկացնու՞մ եք այդ պահանջների մասին:
1.4. Խնդրում եմ նշել այն հմտությունները, որոնք հավաքորդները պետք է ունենան՝ շղթայի արդյունավետությունը բարձրացնելու և արտադրական գործառնությունների երկարաժամկետ հարակայունությունն ապահովելու համար:
1.5. Խնդրում եմ նշել այն իրավակարգավորումները/ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ է բարելավել՝ շղթայի արդյունավետությունը բարձրացնելու և արտադրական գործառնությունների երկարաժամկետ հարակայունությունն ապահովելու համար:
1.6. Կիրառելու դեպքում, հավելյալ արժեք ապահովող ո՞ր գործառնությունը Ձեզ կշահադրդի ավելի բարձր գին վճարել հավաքված մթերքի համար (խնդրում եմ հաշվի առնել նաև արտադրանքի ծավալների աճը):
1.7. Խնդրում եմ լրացնել հետևյալ աղյուսակը, որը վերաբերում է գնված հումքի ծավալներին և գնին:

Տեսակը	Ծավալները (կգ) 2016	Ծախսը դրամ/ԱՄՆ դոլար կգ-ի հաշվով 2016	Ծավալը (կգ) 2017	Ծախսը դրամ/ԱՄՆ դոլար կգ-ի հաշվով 2017

Բաժին 2. Վայրի խոտաբույսերի կամ հատապտուղների հետբերքահավաքային մշակում

2.6. Սովորաբար ի՞նչ աշխատանքներ են իրականացվում՝ սկսած Ձեր ընկերության կողմից վայրի մթերքի գնումից մինչև այն պահը, երբ արտադրանքը պատրաստ է գնալու վերջնական սպառողին:

2.7. Եթե Դուք պահեստավորում եք ապրանքը, ապա պահեստավորման ինչպիսի՞ պայմաններ ունեք (ունե՞ք արդյոք հատուկ տարածք դրա համար, այն չո՞ր է, մու՞թ է, էլ ի՞նչ նպատակներով եք այն օգտագործում):

2.8. Արդյոք մաքրու՞մ և լվանու՞մ եք հավաքված վայրի մթերքը:
Այո_____ Ոչ_____

2.9. Եթե Դուք խոտաբույսը չորացնում եք, ապա չորացման ի՞նչ պայմաններ ունեք (ունե՞ք արդյոք դրա համար հատուկ տարածք, արդյոք այն չո՞ր է, մու՞թ է, էլ ինչի՞ համար եք այն օգտագործում):

2.10. Եթե Դուք ապրանքը փաթեթավորում եք, ապա փաթեթավորման ի՞նչ պայմաններ ունեք (ունե՞ք արդյոք դրա համար հատուկ տարածք, արդյոք այն չո՞ր է, մու՞թ է, էլ ինչի՞ համար եք այն օգտագործում):

2.11. Եթե հավաքի ծավալներն աճեն, Դուք հետաքրքրված կլինե՞ք ընդլայնել վերամշակման ծավալները:

2.12. Ամենազբաղված ամիսներին ձեր հզորության քանի՞ տոկոսով եք աշխատում:
Ամիսները_____ Հզորության_____ %-ը:

Բաժին 3. Արժեշղթա

3.1. Խնդրում եմ նշել բոլոր տեսակի վայրի մթերքները, որ Ձեր ընկերությունը գնում է, ինչպես նաև մատակարարման աղբյուրները՝ համապատասխան ծավալներով (%)

Մթերքի տեսակը	Մթերքի աղբյուրը (գնում)	Տվյալ աղբյուրից գնված մասնաբաժինը
	Ֆերմերներ Սեփական մատակարարում Այլ_____	_____ % _____ % _____ %
	Ֆերմերներ Սեփական մատակարարում Այլ_____	_____ % _____ % _____ %
	Ֆերմերներ Սեփական մատակարարում Այլ_____	_____ % _____ % _____ %
	Ֆերմերներ Սեփական մատակարարում Այլ_____	_____ % _____ % _____ %

3.2. Քանի՞ մատակարարի/հավաքորդի հետ եք աշխատում _____

3.3. Հավաքորդին/մատակարարին արդյոք որևիցե աջակցություն ցուցաբերու՞մ եք (***Ջրուցավարի համար.*** *կանխավճար, փոխադրում, արկղեր և այլն)*

3.4. Մատակարարների/հավաքորդների հետ պայմանագրեր կնքու՞մ եք _____

3.5. Անհրաժեշտության դեպքում կարո՞ղ եք փոխել մատակարարներին/հավաքորդներին: Ինչու՞: _____

3.6. Ե՞րբ եք վճարում մթերած վայրի բույսերի դիմաց, խնդրում եմ նշել մեկ տարբերակ:

Վճարում եմ առաքումից առաջ	**Վճարում եմ առաքման պահին**	**Առաքումից**
		_____ օր անց

3.7. Գո՞հ եք արդյոք մատակարարների հետ հարաբերություններից: Խնդրում եմ բացատրել:

3.8. Որտե՞ղ եք վաճառում Ձեր արտադրանքը (տեսականին, օր.՝ սառեցված մթերք, ջեմ, հյութ և այլն) վերամշակումից հետո, և կոնկրետ գնորդին ի՞նչ արժեքով եք վաճառում ապրանքի յուրաքանչյուր տեսակը:

Մթերքը	**Տեղական շուկա/գնորդի տեսակը**	**Արտահանում /գնորդի տեսակը**	**Վաճառքի արժեքը Դրամ/ԱՄՆ դոլար**

Բաժին 4. Տեղեկատվության մատչելիությունը և ֆինանսների հասանելիությունը

4.6.Ինչպե՞ս եք որոշում մթերքի գնման գինը և գտնում պոտենցիալ մատակարարին:

4.7. Ձեր գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար ի՞նչ տեղեկությունների/հմտությունների/գիտելիքների կարիք ունեք: (***Չրուցավարի համար.*** *շուկայում առկա գինը, որը կարելի է օգտագործել որոշելու համար, թե ինչ է պետք հավաքել. առևտրականների հետ հաղորդակցության/սկարկելու հմտություններ, մարկետինգային հմտություններ, որոնք թույլ կտան ապրանքի հավելյալ արժեք ավելացնել վաճառքից առաջ և այլն):*

4.8. Արդյոք համացանցային մարկետինգից օգտվու՞մ եք աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու և դրանց շահութաբերությունը ավելացնելու համար:

4.9. Արդյոք հետաքրքրվա՞ծ եք նոր բիզնես սկսելով կամ գործող բիզնեսն ընդլայնելով: Խնդրում եմ բացատրել:

4.10. Ինչպե՞ս կարող եք ստանալ նոր բիզնես սկսելու կամ գործող բիզնեսին օժանդակելու համար անհրաժեշտ նախնական ֆինանսավորումը:

Հավելված 3. Վավերացման աշխատաժողովի օրակարգը

Վայրի հավաքի հմտությունների գնահատման ուսումնասիրության արդյունքների ներկայացում և քննարկում

Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն, 2-րդ հարկ, Տերյան 74

5 ապրիլի, 2018թ., 16:00 – 18:00

16:00–16:05	Գայանե Մկրտչյան, Հայաստանի գենդերային ծրագիր, Միջազգային ֆինանսական կորպորացիա
16:05–16:30	Աննա Երիցյան, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն – Վայրի հավաքի արժեշղթայի գնահատման ուսումնասիրության արդյունքների ներկայացում
16:30–18:00	Աշխատանքային խմբերով քննարկում և ուսումնասիրության արդյունքների ամփոփում

IN PARTNERSHIP WITH

June 2018